

ԱՏ. ՆՈՆԱԿՈՅԱՆ

ԱՎ. ԻՍԱԿԱԿՅԱՆԻ
ԱՏԵՂՈՒԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎԲՆԱԿԱՆ
ՍՈՒՆԵՐԱԿԸ

ՀԱՅԿԱՆՏԵՆ

26799

891.99(09) [Խառնուկա]

Պ-36 Եսմալյան, Կ. Տ.

Խառնուկա

համադրություն

32.70%

14

14

11

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

А. Т. ГАНАЛАНЯН

**НАРОДНЫЕ ИСТОКИ
ТВОРЧЕСТВА
АВ. ИСААКЯНА**



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

91.99.092 [համարակազմ]

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Պ-36

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

A 31749

**ԱՎ. Ի Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ի
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ**



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՐԱԶՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Հ Ա Յ Ն Ն Ք Ը Զ Ո Ս Կ Ը Ն

ՍՍՍՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԽՈՐՀԱՐԴԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀԱՐԴ


ԳՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀԱՐԴ





Ա. Գևորգ Բաճակյան





Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Այլ. Իսահակյանի հարուստ ու բազմաժանր ստեղծագործությունը սերտորեն կապված է ժողովրդական բանահյուսության հետ: Ժողովրդի հանձարը՝ մարմնավորված նրա բառ ու բանի մեջ եղև է բանաստեղծի մշտական ուղեկիցը: Գրականության մեջ մտնելով անցյալ դարի 90-ական թվականներին՝ ժողովրդական և գուսանական երգերի անմիջական ազդեցությամբ դրված մի շարք լիրիկական բանաստեղծություններով, Իսահակյանը հետագայում էլ, իր ստեղծագործական բազմամյա ու բեղմնավոր կյանքում, օրգանապես կապված է մնացել ժողովրդի բանարվեստին:

1897 թ. տպագրված «Ալագյազի մանիներ» շարքը և 1938 թ. լույս տեսած «Սասմա Մհեր» նշանավոր վիպերգը, որի «Վերջերգ»-ում էպիկական մեծ պաթոսով բացահայտված է «ռամկի օրենք ու իրավունք» հաստատած Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ունույնցիայի համաշխարհային-պատմական աննախընթաց դերը, բանաստեղծի երկարատև ստեղծագործական ճանապարհի այն կարևոր ուղենիշներն են, որոնք նշանավորում են նրա ապրած հասարակական-քաղաքական խոշոր էվոլյուցիան:

Ժողովրդական բանահյուսությունը տարիների ընթացքում նպաստել է Իսահակյանին իր ստեղծագործական նավը գրական և դադարախառնական զարգացման խոշու խութերի միջով դուրս բերելու դեպի ժողովրդայնության ասիերը:

Մտենալով ժողովրդի անգիր բանահյուսությանը, Իսահակյանը դրանով իսկ մոտեցել է ժողովրդական առողջ արվեստի ակունքներին: Նա ժողովրդից սովորել է ռեալիզմը, կիրառել է այդ «նախակերտ» ռեալիզմը իր լավագույն գործերի մեջ՝ դեղարվեստական բարձունքի հասցնելով այն:

Ավ. Իսահակյանի մերձեցումը ժողովրդական բանահյուսությանը կատարվել է միանգամայն օրինաչափ կերպով: Այդ մերձեցման գլխավոր հիմքը հանդիսացել է բանաստեղծի սերտ կապը գյուղի ու քաղաքի աշխատավորական խավերի հետ, նրա աշխարհագրագրություն ու աշխարհայացքի գյուղացիական-դեմոկրատական խորը արմատները: Պակաս կարևոր դեր չի խաղացել տվյալ հարցում նաև բանաստեղծի անձնական հակումն ու սերը դեպի իր ժողովրդի բառ ու բանը, որը նրա մոտ երևան է եկել դեռ շատ վաղուց:

«Ես ծնվել եմ Հայաստանի պատմական Շիրակի գավառում: Այստեղ մանկական իմ երևակայությունը թևավորվեց դարերի խորքից եկող բանաստեղծական ֆուլկլորով, գուսանների ու գյուղացիների երգերով»¹, — խոստովանում է Իսահակյանը իր հոդվածներից մեկում:

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի մոդովածու, հատ. 4, էջ 89:

Մի ուրիշ տեղ նա գրել է. «Սիրելիագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել... Այստեղ, մեր անուշ տատիկներից լսել եմ հոգի կախարդող հեքիաթները, մեր փորձաշատ պապիկներից իմաստուն զրույցներ, խոսք, առած: Մեր թափառական դուստաններից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի շքնաղտաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ սրտահույզ երգերը: Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը, որին ես այնքա՛ն ու այնքա՛ն երախտապարտ եմ...»¹:

Սակայն, Իսահակյանի ստեղծագործական հետաքրքրությունը չի դաժացել ոչ միայն Շիրակի, այլև ողջ հայ բանահյուսությամբ, որին նա քաջատեղյակ է դարձել տարիների ընթացքում թե՛ բանավոր և թե՛ դրավոր աղբյուրներից: Խորապես սիրելով և ուսումնասիրած լինելով հայրենի բառ ու բանը, նա հետաքրքրություն է ցուցաբերել նաև մյուս ժողովուրդների ֆոլկլորի նկատմամբ, ծանոթացել է հնդկական, շինական, պարսկական, արաբական, հրեական, քրդական, սերբական, ուսական, ֆրանսիական, գերմանական, ֆիննական առասպելներին ու զրույցներին, լեգենդներին ու բալլադներին, հեքիաթներին ու վեպերին, երգերին ու վիպերգներին, առակներին ու առածներին:

Ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած իր դրական դիրքորոշումով Իսահակյանը հակադրվել է ժամանակի կղերական-պահպանողական հեղինակներին և լիբերալ բուրժուական էսթետներին, որոնք անտեսում ու արհամարհում էին ժողովրդի բառ ու բա-

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 168:

նը, թերագնահատում էին վերջինիս գաղափարական և գեղարվեստական արժանիքները:

Բանաստեղծի գրական դաստիարակներն ու գրչակիցներն այս հարցում եղել են՝ Սայաթ-Նովան ու Աբովյանը, Պոռչյանն ու Աղայանը, Թումանյանն ու Հովհաննիսյանը հայ գրականության մեջ, Պուշկինն ու Կոիլովը, Լերմոնտովն ու Շևչենկոն ռուս և ուկրաինական, Գյոթենն ու Հայնենն՝ եվրոպական գրականության մեջ:

Իր գրական ճանապարհով և ստեղծագործության բնույթով Իսահակյանը առանձնատես մտտ է հայ բանաստեղծական գրականության երկու խոշոր դեմքերի՝ Հովհաննես Հովհաննիսյանին և Հովհաննես Թումանյանին: Առաջինը իր «սրտի խոսքերով, սիրո և երազական վշտի երգերով», բայց մանավանդ իր սքանչելի ժողովրդական մտախմբերով, բախտորոշ դեր է կատարել Իսահակյանի համար, և եղել է նրա ուսուցիչն ու «կախարդ ուղեցույցը»¹: Երկրորդը գրավել է Իսահակյանին իր «պոեզիայի ժողովրդային տարերքով»², հանդիսացել է նրա գրական դաշնակիցը, որի հետ ուս-ուսի նա նոր ու աննախընթաց աստիճանի է բարձրացրել ձևով ազգային, բովանդակությամբ դեմոկրատական հայ բանաստեղծական գրականությունը, ազգային ձևերի մեջ ձուլել է համամարդկային զգացումներ ու գաղափարներ:

Ժողովրդական բանահյուսության մեջ Իսահակյանը տեսել է տվյալ ժողովրդի աշխատավոր մեծամասնու-

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 16:

² Նույն տեղում, էջ 21:

թյան կյանքի ու պայքարի, նրա աշխարհայացքի ու հոգեբանության, լեզվի ու ոճի, տեղային կոլորիտի անխարդախ պատկերը:

Ժողովրդական առասպելների, հեքիաթների, վեպերի ու երգերի մեջ նա գտել է իսկական պոեզիայի ընտիր նմուշներ, բարձր իդեալներ, բարոյական մաքրություն ու անկեղծություն, զգացումների հարստություն ու նրբություն, պարզություն ու խորություն:

Իր մեծ ուսուցիչների ու գրչակիցների նման դիմելով ժողովրդական բանահյուսությանը և ներշնչվելով վերջինով, Իսահակյանը երբեք չի ստրկացել նրան: Ժողովրդական բառ ու բանի օգտագործումը գրականության մեջ բանաստեղծի համար ընդունելի է եղել միայն ստեղծագործական ինքնուրույն մտահղացման պայմաններում: Ընդհանուր առմամբ հարազատ մնալով ժողովրդական այս կամ այն առասպելի, սովանդության, զրույցի, հեքիաթի, երգի, առակի ոգուն ու ոճին, Իսահակյանը կրավորական կերպով չի վերարտադրել դրանք: Նա տոգորել է այդ ստեղծագործությունները իր հարուստ անհատականությամբ, իր աշխարհայացքով ու աշխարհազգացումով, իր գեղագիտական ու գաղափարական ըմբռնումներով, դրել դրանց վրա իր գեղարվեստական մեծ ու ինքնատիպ տաղանդի անջնջելի դրոշմը:

Իսահակյանի, իբրև ժողովրդական բանահյուսության նյութերի վարպետ մշակողի ու օգտագործողի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրա մոտ հավասար հաջողությամբ հանդես են գալիս միևնույն ատաղձով ստեղծված թե՛ բարձր գրական ոճի գործեր և

թե՛ ժողովրդական դուչն ու երանգ ունեցող ստեղծագործություններ:

Սովետական շրջանում Ա.վ. Իսահակյանը շարունակում է իր բեղմնավոր կապերը ժողովրդական լայնահյուսության հետ: Հավատարիմ իր ստեղծագործության մեջ այդ ուղղությամբ անցյալում ստեղծված լավագույն տրագիցիաներին, բանաստեղծը հաճախակի դիմում է ժողովրդական բանահյուսության ակունքներին: Նամշակում, փոխադրում է ժողովրդական առասպելներ ու առակներ, երգեր ու հեքիաթներ, օգտագործում է ժողովրդի բանաստեղծական լեզուն ու արվեստը, ուշի-ուշով հետևում է Սովետական Միության բազմազգ ժողովուրդների ֆոլկլորի վերաբերյալ լույս տեսնող հարուստ նյութերին, հողվածներ է դրում բանահյուսական այս կամ այն թեմայի շուրջը:

1937—1938 թթ. Իսահակյանը հիմնովին վերամշակում և երկրորդ հրատարակությամբ լույս է ընծայում 1919 թ. գրված և 1922 թ. տպագրված իր նշանավոր «Սասմա Մհեր» վիպերգը:

Նույն տարիներին նա մշակում է «Հստն ու հովիվը» ուշագրավ հայկական ժողովրդական առասպելը, «Մեծ համարտությունը» սոցիալական սուր բովանդակությամբ առակը, հայերենի է փոխադրում «Պարոն Թիզմանը» վերնագրով դանիական հին ժողովրդական երգը:

1939—1941 թթ. Իսահակյանը մշակում է մի շարք առակներ («Այծն ու գայլը», «Գայլն ու եղնիկը», «Գյուղացին ու ճնճղուկը») ու հեքիաթներ («Նուկիմ քաղաքի խելոքները»), ստեղծում է ժողովրդական ոճ ու սգի ունեցող իր սքանչելի «Բինգյուլ» բանաստեղծությունը:

Նույն տարիներին նա գրում է «Փորձ մեր էպոսի դիցարանության մասին» նոր փաստերով և հետաքրքիր պատգամներով հարուստ հողված-ուսումնասիրությունը («Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի առթիվ) և «Ադրբեջանական բայաթիներ» վերնագրով գրախոսություն-հողվածը (ադրբեջանական բայաթիների հայերեն հրատարակության առթիվ):

1949 թ. «Կալեվալա»-ի հազարամյակի կապակցությամբ բանաստեղծը գրում է «Կարելո-Ֆիննական աղ-դային էպոսը» ուշագրավ հողվածը:

Մի շարք տարիների ընթացքում Իսահակյանը, ինչպես ինքն է վկայում, նյութեր է հավաքում և աշխատում է Լենինի մասին էպիկական երկի վրա, հիմք ընդունելով էպոսը, ուսական բիլինաները¹:

¹ Տե՛ս Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 91:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Ավ. Իսահակյանի ստեղծագործության կապը ժողովրդական բանահյուսության հետ արտահայտված է, նախ և առաջ, ժողովրդական առասպելների, ավանդավեպերի, զրույցների, բալլադների, հեքիաթների, վիպերգերի, առակների ու երգերի գրական մշակումներով, բանահյուսական այս կամ այն նյութից նրա ստացած ստեղծագործական դրդումներով, ինչպես նաև հիշյալ կարգի նյութերի փոխադրություններով ու թարգմանություններով:

Բանաստեղծի նշված գործերը, որոնք ծանրակշիռ տեղ են գրավում նրա ողջ ստեղծագործության մեջ, աչքի են ընկնում իրենց թեմատիկ լայն ընդգրկմամբ: Իսահակյանի մյուս երկերի նման դրանք, հիմնականում, նվիրված են սիրո, մոր, հայրենիքի և սոցիալական անհավասարության ու դասակարգային պայքարի թեմաներին:

Տարբեր ժամանակ և տարբեր առիթներով անդրադառնալով վերոհիշյալ թեմաներին, Իսահակյանը վերջիններիս միջոցով բացահայտել է իր ապրումներն ու մտորումները, արձագանքել է ժամանակի կարևոր հա-

սարակական-քաղաքական երևույթներին, կատարել է գաղափարական և գեղարվեստական նշանակալից ընդհանրացումներ:


1.

Ավ. Իսահակյանի մշակած, փոխադրած, թարգմանած ժողովրդական ավանդավեպերի, զրույցների, բալլադների, առասպելների ու երգերի մեծ մասը նվիրված է սիրո թեմային: Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ, բանաստեղծը անձնական կենսագրության և շրջապատի միջավայրի ֆոնի վրա բացահայտել է սիրո բարդ ու հակասական էությունը, նրա հարուցած ուրախությունն ու վիշտը:

Գեղարվեստական խոսքի մեծ ուժով Իսահակյանը պատկերել է իր համար այնքան հարազատ երազային, մաքուր սիրո հետ կապված ապրումները, վերարտադրել է անարձագանք ու անմուրազ սիրո ծանր ողբերգությունը:

Ստեղծագործական ներշնչման հատուկ առարկա է դարձել բանաստեղծի համար հասարակական-բարոյական բարձր գաղափարներով և մարդկային ազնիվ զգացումներով տոգորված սիրո առմանտիկան, որն ընդունակ է մղելու մարդուն գեպի անձնազոհություն, գեպի հերոսացում, որն ընդունակ է արհամարհել տալու մահը:

Իսահակյանի սիրային թեմա ունեցող բանահյուսական բնույթի գործերը խոշոր գեղարվեստական արժեքի հետ միասին, ունեն նաև ճանաչողական կարևոր նշանակություն: Դրանք զգալի շափով լինելով պոետի



Իսահակյանների ջրաղացները Ղաղարաղատում, ուր բանասեղծն իր երիտասարդության տարի-
ներին լսել է բազմաթիվ ժողովրդական հեքիաթներ և երգեր

Լուսանկարը արձանագրել է Հարտարապետ Ռ. Իսրայելյանը

անհատական ապրումների ու խոհերի արդասիքը, միաժամանակ հանդիսանում են նրա ապրած էպոխայի մարդկանց հույզերի ու մտորումների հարազատ արտահայտությունը:

Ժանրային տարբեր ձևերի մեջ և ոճական ուրույն միջոցներով բանաստեղծը ցույց է տվել թե ինչպես սիրո երջանկության զգացումը վեր է ածվում իր հակադրությանը, երբ նրան արգելք են դառնում տիրող հասարակական-քաղաքական պայմանները՝ ընչքային անհավասարությունը, նյութական ապահովության հարցը, քաղաքական ճնշումն ու բռնությունը:

Բուրժուական իրականության մեջ, ուր տիրապետող էր «մերկ շահը» և «անսիրտ կանխիկ հաշիվը», որը «մարդու անձնական արժանապատվությունը վեր էր ածում փոխանակային արժեքի», Իսահակյանը, բնականորեն, չէր կարող դանել իր երազած իդեալական սերը: Նա այդ սերը, իրավացիորեն, սրունել է «Ֆեոդալական, նահապետական իդիլիական հարաբերությունների»¹ մեջ, միջնադարյան ասպետների և սարի հովիվների պարզ կենցաղի պայմաններում: Վերջիններիս համար բնորոշ մաքուր, անկեղծ, ազնիվ և անձնվեր սերը բանաստեղծը հակադրել է քաղքենիական այլասերված, ծախու սիրուն:

Ցավով ու կսկիծով վերարտադրելով իրական սիրո ողբերգությունը, Իսահակյանը փարել է սիրո ռոմանտիկային, հավերժական սիրո գաղափարին, վերջինիս գեղարվեստական մարմնավորման համար մեծ ճաշակով

¹ Մ ա Ր Բ ս է ն դ և լ ս, Կոմունիստական պարտիայի մասնիՖեոսթ, Երևան, 1948, էջ 23:

ու վարպետութեամբ օգտագործելով ժողովրդի ստեղծած համապատասխան ավանդավեպերն ու գրույցները, բալլադներն ու առասպելները:

«Ասպետի սերը» (1917 թ.) լեզենդի մեջ ամբողջի դիցուհին կարոտով, սրտատրուի սպասում է իր երազի գեղեցիկ ասպետին: Վերջինիս փոխարենն օրերից մի օր զալիս է մի կտրիճ իշխան և տեսնելով ամբողջի հրաշագեղ դիցուհուն՝ սիրահարվում նրան: Իշխանի հայցած փոխադարձ սիրո փոխարենն աղջիկը առաջարկում է նրան թողնել իր ամբողջը և սպասել իրեն: Իշխանը ամենայն հնազանդութեամբ կատարում է նրա պահանջը: Անցնում են օրեր ու տարիներ, բայց աղջիկը չի երևում: Կտրիճ իշխանը երկար սպասելով նրան՝ ծերանում է ու մեռնում նրա վառ կարոտը սրտի մեջ:

Իր այս լեզենդը Իսահակյանը գրել է ստեղծագործական դրդում ստանալով Վ. Փափաղյանի «Ասպետը» գրվածքի սկզբում մեջ բերված մի միջնադարյան ավանդավեպից¹:

¹ Վ. Փափաղյանի բերած ավանդավեպը հետևյալն է.

«Մի անգամ մի գորեղ ասպետ սիրեց մի իշխանուհու: Թողեց հայր ու մայր, թողեց տուն ու տեղ, հեծավ իր նժույզը, առավ իր նիզակը և եկավ կանգնեց իր իգևալի ամբողջի տակ:

Բայց աղջիկը քարասիրտ էր, ամբողջի մոտ գիշեր-ցերեկ կանգնած ասպետին թողեց անուշադիր և չխղճաց անգամ: Ասենք ասպետը գութ չէր սր ուղում էր, այլ միմիայն սեր: Նիզակը ցցեց ժայռի մեջ. ձին կապեց հսկա կաղնուն և համառութեամբ սպասեց ամիսներ ու տարիներ...

Աղջիկը նրան չսիրեց: Նա սիրտ չուներ, ոչ սքի չէր սիրում. ամենքին հուռահատեցրել էր և ետ դարձրել, ամենքին մերժել էր և սրտերը հոշոտել:

Ասպետը լուս ու համառ՝ մնաց ամբողջի տակ:

Գեղարվեստորեն վերաստեղծելով հիշյալ ավանդավեպի սյուժեն, բանաստեղծը հատկապես ընդգծել է նրա հերոսի անձնուրաց, ոռոմանտիկ սերը և ասպետական հավատարմությունը իր տված խոսքին, նոր մոտիվներով հարստացրել նրա բովանդակությունը, պոետական շափածո՝ ձև ու կառուցվածք, լեզու ու ոճ տվել իր ձեռքի տակ եղած արձակ պատմությանը:

Հարկ է առանձնակի շեշտել քաջ ասպետի խանդավառ սիրո և բուռն կարոտի ու հուսավառ սպասումի իսահակյանական գեղեցիկ և հուզիչ նկարագրությունները, որոնց մեջ լավում է մեծ սիրերգուի սրտի ծանոթ արոտիյունը: Օրինակ.

Ի՞նչպես հայտնեմ սրտիս հուրը, նազելի՛ս,
Կուզե՛ս պատռեմ կուրծքս հիմա այս սրբով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնիմ ուրախ ու բախտավոր քո սիրով:

Կամ՝

Աչքերը գոց՝ պատած ոսկի մշուշով,
Ուր կը ժպտար սեր-աղջիկը անմամ,

Ձյունն ու քամին, արևն ու խորշակը նրան անդրդվելի գտան. ուղառնալիք ու անոթություն նրան չընկճեցին...

Եվ նա նվիրվեց: Միրեց, սիրեց... ու մեռավ:

Ու երբ մեռնում էր, խնդրեց աստծուց միմիայն մի բան. այնպես անել, որ դիակն իսկ ի դեպից անբաժան մնար:

Եվ աստված լսեց նրան. քարացրեց դիակն ու ձին, ու նիզակը ամբոցի կողքին:

Այսպես ասպետը սիրեց և քարացած՝ հավիտյան մնաց իր ի դեպի մոտ:

Միրեց, սիրեց ու քարացավ ...» (տես «Հայ գրողներ», Ա., Թիֆլիս, 1914, էջ 197—198):



A 31749

Քաջ ասպետը բոց կարտառվ, լի հույսով,
Սիրտը ձենի՝ լուռ սպասեց աղջկան...¹

«Արաքսի ծնունդը» (1922 թ.)² լեզենդի մեջ, որին հիմք է ծառայել հայրենի Շիրակում բանաստեղծի լսած ժողովրդական գրույցներից մեկը, արյունակղակ բռնավորը մոր գրկից առևանգում է նրա հարազատ դստերը: Տղան գնում է սիրած աղջկա ետևից: Գտնելով աղջկան բռնավորի գրկում, տղան վրեժով լցված սպանում է առևանգիչին: Սրա հավատարիմ ծառաները տեղն ու տեղը սրախողխող են անում թե՛ տղային և թե՛ աղջկան: Տղայի մայրը երկար որոնումներից հետո, վերջապես, գտնում է խոշտանգված զավակին՝ հարսի հետ միասին: Լացով համբուրում է նրանց նշխարները և ավանդում հոգին:

Մոր, տղայի ու հարսի թափած արյուն-արցունքից հայոց լեռներում հազար ակն-աղբյուր է դոջանում:

Մշակելով տվյալ լեզենդը Իսահակյանը նրա մեջ վերարտադրված անմուրազ սիրո ողբերգությունը սերտորեն կապակցել է հայ ժողովրդի ասլրած քաղաքական ծանր վիճակի հետ, ակնարկել Հայաստանի վզին ընկած օտար նվաճողների դարավոր դաժան լուծի մասին: «Արաքսի ծնունդը» լեզենդը, այս առումով, Իսահակյանի մշակած սիրային թեմա ունեցող ստեղծագործություններից ամենից ավելի ազգային-քաղաքական նկարագիր ու կոչորիտ ունեցող գործերից է:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 130—131:

² Ունի՝ «Աշուղ Վշտայիի գրույցը», հասված «Ռուսա կարո»-ից Ենթավերնադիրը (տե՛ս Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 141):

Այստեղ բնորոշ դժերով նկարագրված է Հայաստանի լեռնային պեյզաժը:

Խորունկ են հայոց ձորերը անտակ,
Սարերը բարձր, բարձրաշեն գմբեթ.—
Այդ սար ու ձորում հնու՞թ ժամանակ
Մի հայ մայր կապրեր իրեն որդու հետ:

Տրված է ժողովրդի աշխատանքային կյանքն ու կեն-
ցալը և այդ ֆոնի վրա երկու սիրող զույգերի սիրա-
վեպը.

Ինչպես կը հնչե ծաղկունանց միջով
Սարի հովն անձ¹ւշ,—
Այդպես մեղրաձայն՝
Հոտն առաջ ձգած, սրինդ փշելով
Իրկուն տուն կուգար միամոր աղան:

Եվ նրանց դրկից կապրեր մի աղջիկ՝
Ոսկի մաղերով սարերի եղնիկ.
Ու նրանց սերը դարնան պես ծաղկած՝
Վառ-վառման ծաղիկ²:

Պատկերված է թշնամական հորդաների ներխուժու-
մը Հայաստան և նրանց գործած ավերը.

Որտեղից որ էր, մեր աշխարհ մտան
Հայի թշնամիք—մարդակերպ դազան,
Եկան քանդեցին մեր տունն ու այգին,
Մահ, ավեր բերին մեր շեն աշխարհին:

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 141:

² Նույն տեղում:

Եվ մի օր եկավ մի վայրի հորդա,
 Ու այդ հորդային գլուխ-բռնապետ
 Տեսավ նազելի սիրուն աղջկան,
 Խլեց մոր գրկեն ու տարավ իր հետ...¹:

Բանաստեղծը դադարաբաշխ-գեղարվեստական մեծ ընդհանրացման է հասնում իր գրվածքի վերջում, թշնամու գործած եղեռնի հետևանքով մոայլ տեսք ստացած հայոց սարերի ու նրանցից իջնող և մայր Արաքս գետը կազմող բյուրավոր ալիների գունեղ ու հուզիչ պատկերով, ազնիվ զայրույթի ու վրեժի բուռն զգացմունքներ արթնացնելով ընթերցողների մեջ իր հայրենիքի թշնամիների նկատմամբ:

Այն սև օրվանեն Բյուրակն են կոչվել
 Գմբեթ սարերը բյուր-աղբյուրներով,
 Այն սև օրվանեն սարերն են զուգվել,
 Զոհված արյունի վառ ծաղիկներով:

Ու այդ ալիները հայոց սարերեն
 Իջել են, կու դան ու կիջնեն էլի՝
 Հյուսվելով իշար՝ մեկտեղ դառել են
 Մեր մայր-Արաքսը՝ հազար սիրելի²:

Ավ. Իսահակյանի սիրային թեմա ունեցող բանաստեղծական բնույթի ստեղծագործությունների մեջ առանձնակի տեղ է գրավում «Հավերժական սերը» լեզունդը: Այստեղ ավելի, քան որևէ այլ գործում երևան է եկել ավյալ թեմայով բանաստեղծական նյութերի գրական

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 141:

² Նույն տեղում, էջ 143:

մշակման ասպարեզում բանաստեղծի կատարած սեկոնդարժուրժական բեղմնավոր աշխատանքը:

«Հավերժական սերը» (1914 թ.) լեզենդը գրելու համար Իսահակյանը ազդակ է ստացել «Արևելյան զրույց» անվանված մի բավական ընդարձակ արձակ պատմությունից (հավանորեն թարգմանական), որն անստորագիր ձևով տպված է «Հյուսիսափայլ» ամսագրի մեջ և կրում է «Անթար» վերնագիրը: Այդ պատմության շատ համառոտ բովանդակությունը հետևյալն է:

Շամ անասատում գտնվող կախարդական Թագմորի ավերակների բնակիչ հրաշագեղ բեղվին փերին՝ Գյուլ-Նազարը, սիրո երջանկություն է առաջարկում «անասատների դարդ» և «հաղթության սուր» Անթար անունով բեղվինին: Վերջինս ընդունում է Գյուլ-Նազարի առաջարկը, պայմանով, որ նա վերջ տա Անթարի կյանքին, երբ նկատի, որ գառնություն է մտնում իրենց սիրո մեջ:

Անցնում են տարիներ... Բուռն սիրո վայելքը կամաց-կամաց սկսում է սառչել Անթարի մոտ: Զգալով այդ, Գյուլ-Նազարը հավատարիմ իր տված խոսքին, վերջին կրակոտ համբույրի հետ առնում է Անթարի հողին:

Սակայն Գյուլ-Նազարի մեջ չի մեռնում սերը: Առանց բաց թողնելու Անթարին իր գրկից, նա նույն կրակոտ սիրով շարունակում է սիրել նրա անշնչացած մարմինը և մինչև վերջ գգված մնալ իր ամենասիրելի մարդու հողեղեն նշխարներին...¹:

Այստեղ հարկ է նկատել, որ բուն «զրույցը» կազ-

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 15—41:

մում է վերոհիշյալ պատմութեան սյուժետային կորիզը միայն, որը անհայտ հեղինակի կամ թարգմանչի կողմից վերարտադրված է նկարագրական և այլ կարգի մանրամասներով:

«Անթար» դրույցի բանահյուսական ծագում ունենալու հանգամանքն աներկբայելի է: Այն հաստատվում է մի շարք ժողովուրդների բանավոր ստեղծագործութեան մեջ առկա նրա հեռու ու մոտիկ տարբերակներով, որոնցից մեկի գրական ինքնատիպ մշակումն է հանդիսանում նաև Մ. Գորկու հռչակավոր «Աղջիկն ու մահը»:

Ավ. Իսահակյանին տվյալ ստեղծագործութեան մեջ գրավել ու ոգևորել է Գյուլ-Նազարի բուռն ու անօրինակ սերը, մի սեր, որը չի թուլանում անգամ այն ժամանակ, երբ իր սիրո առարկան դիակի է վերածվում:

«Հյուսիսափայլ»-ի մեջ տպված վերոհիշյալ պատմութեանը բանաստեղծի համար հանդիսացել է լոկ ստեղծագործական մի հենք, որի վրա նա մեծ վարպետութեամբ ասեղնագործել է բոլորովին նոր ու ինքնուրույն գեղարվեստական մի գործ, տալով նրան «Հավերժական սերը» խոսուն վերնագիրը¹:

Լեզենդի փիլիսոփայական առանցքն է կազմում սիրո կենսահաստատ, հզոր ուժ լինելու գաղափարը, մի ուժ, որն ընդունակ է հաղթահարելու բնութեան և հասարակական կյանքի բոլոր հակոտնյա ուժերին, ոչնչաց-

¹ Քննալթյան տարեկա նյութը Իսահակյանի կողմից մշակվել ու տպագրվել է նախ արձակ և ասլա վերաստեղծվել ու կատարելագործվել շափածո ձևով:

նեղու շարն ու շարիքը, հաստատելու բարին ու ազնիվը,
արհամարհելու անդամ մահը:

Լեզենդն աչքի է ընդնում իր արևելյան երանգավո-
յումով, գունեղ ու ճոխ լեզվով, գեղարվեստական
սքանչելի նկարագրություններով, բանաստեղծական
վառ ու խնքնա:տիպ սլոտիկերներով, որոնք հոյակապ
բանդակների նման զարդարում են դրվածքի ողջ շենքը:

Փայլուն գեղարվեստական դրվագներից է, օրինակ,
Թագմորի ապարանքի հետևյալ նկարագրությունը.

Լուսակերտ է ապարանքը Թագմորի,
Անապատում, որպես երազ ոսկեհյուս.
Յոթն հարյուր սյունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը երկնասույզ:

Շուրջը նազուկ արմավենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք-հավեր կարոտով,
Շատրվաններն հուրհուրում են կրակներ,
Մաղիկները պճնազարդում արծաթով¹:

Իր արվեստով՝ Թագմորի ապարանքի վերոհիշյալ
նկարագրությանը չի զիջում էլ-Սամանի հրաշագեղ
Բամբիշի բարեմասնությունների դովքը:

Գահի վրա երիտասարդ էլ-Սաման
Մեղմ գրկել է հրաշագեղ Բամբիշին.
Կրծքի վըրա հյուսքը նրա — ծփծփան,
Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին:

Փիրուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայտերը Լիրանանի փեշերի՝

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2,
էջ 123:

Չունի ա՛յնպես, ա՛յնպես փրփուր ձյունաթույր,
Ինչպես կուրծքը լուսապայծառ Բամբիշի...¹

Պոետական խոսքի մեծ ուժով ու պաթոսով են շնչում լեզենդի մեջ էլ-Սամանի սիրային խոստովանություններին նվիրված տողերը, ուր բանաստեղծը ինքնատիպ պատկերներով բացահայտել է իր հավատամքը՝ հավերժող ու անանց սիրո մասին.

Բարձր են երկնի ձեղունները, նազելի՛ս,
Բայց ի՞մ սերը բարձրաբարձ է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց ի՞մ սերը խորախոր է նրանցից:

Ժամանակը իր վախճանին կհասնի
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց ի՞մ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...²

Բերված նմուշներով շեն սպառվում Ավ. Իսահակյանի սիրային թեմա ունեցող բանահյուսական բնույթի ստեղծագործությունները: Դրանց թիվը բավական մեծ է: Բացի հիշված գործերից, ստեղծագործական միևնույն սկզբունքով մշակված ուշագրավ երկեր են նաև.

«Անակի փերին» (1895—1917 թթ.) փոքրիկ լեզենդը՝ «Ալադյադի մանիներ» ցիկլից, որի նյութը վերցված է Շիրակի բանահյուսությունից:

Լեզենդի բովանդակությունը մասամբ հիշեցնում է Մ. Գորկու «Չկնորսն ու փերին»: Նրա մեջ վերարտա-

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 123:

² Նույն տեղում, էջ 124:

գրված է հեքիաթային մի գեղեցիկ պատմություն բուռն և կախարդիչ սիրո մասին, որի հերոսներն են՝ հովիվ տղան և լճակի հրաշագեղ փերին¹:

«Լեյլի Մեջլում» (1910 թ.) լեգենդը, որի համար օգտագործված է արևելյան համանուն ավանդավեպի քրդական վարիատներից մեկը²:

Լեռնցի քրդերի կյանքից վերցված այս հուզիչ սիրավեպի միջոցով, որի հերոսներն են՝ կտրիճ Մեջլումն ու գեղուհի Լեյլին, Իսահակյանը մեծ արվեստով բացահայտել է անմուրազ, բայց մաքուր ու անկեղծ սիրո տնտեսության գաղափարը³:

«Լիլիթ» (1921 թ.) սքանչելի արձակ լեգենդ-պոեմը, որի նախնական նյութը վերցված է հրեական առասպելներից (Թալմուդ):

Երաժշտական մելոդիայի պես նուրբ ու գեղեցիկ լեզվով, բանաստեղծական աննման պատկերներով ու նկարագրություններով, Իսահակյանն իր այս գրվածքում բացահայտել է հողեղեն Ադամի և հրեղեն Լիլիթի բարդ ու իրարամերժ ապրումները, գովերգել երազային-ռոմանտիկ սիրո շխամբող հմայքը, մարմնավորելով այն բոլոր «տանջող և ապրեցնող հրապույրների արևադարձներ», «չճաշակված ու անհաղթելի», «հրաշքների և հմայքների միակ դրախտ»-կնոջ՝ Լիլիթի սիմվոլիկ կերպարի մեջ⁴:

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 29:

² Տպագրված է Էմինյան ազգագրական ժողովածուի 5-րդ գրքում (1903, 71—75), Մոկաց տիմանցի քրդերի բարբառով, հանդերձ հայերեն թարգմանությամբ:

³ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 119—122:

⁴ Նույն տեղում, հատ. 3, էջ 221—237:

2.

Անանձնապես սրտամոտ թեմա է եղել Իսահակյանի համար մոր թեման, որին նա բազմիցս անդրադարձել է ինչպես իր մյուս ստեղծագործությունների, այնպես էլ բանահյուսական բնույթի գործերի մեջ:

Մոր թեմային են նվիրված բանաստեղծի մշակած լավագույն բալլադներից, լեգենդներից, առակներից ու կերպերից մի քանիսը:

Ավ. Իսահակյանի փայփայած հասարակական-բարոյական բարձր իդեալներին, նրա ապրած անցյալի «կեղծավոր», «շար» ու «փուշ» աշխարհում, ամենից ավելի համահնչուն է եղել մոր կերպարը՝ իր անկեղծ ու անբասիր հոգով, անշահախնդիր ու անդավաճան մեծ սիրով:

Մոր կերպարի մեջ բանաստեղծը մարմնավորել է մարդկային հասարակական ամենավսեմ զգացմունքներն ու գաղափարները — անձնազոհություն, հումանիզմ, սեր դեպի բարին ու աղնիվը, կարեկցանք թշվառների, զրկվածների ու հալածվածների նկատմամբ, անհուն նվիրվածություն հարազատ երկրին ու ժողովրդին...

Այդպես է թելադրել Իսահակյանին կյանքը, այդ է ներշնչել նրան հարազատ մոր հավերժ սիրելի ու նվիրական կերպարը, որից նա, իր իսկ խոստովանությամբ, շատ ուրիշ լավ բաների հետ, սովորել է՝ «սիրելի ամբողջ աշխատավոր մարդկությունը, սիրել հայրենի երկիրը, նրա բնությունը»¹:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 89:

«Պանդուխտ որդին» (1902 թ.) բալլադում Իսահակյանը արտահայտել է մայրական սիրո անմրցելի լինելու գաղափարը:

Գարդը սըրտիս, աղբատ ու խեղճ, ցուպը ձեռիս, գլխակոր,
Շատ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծըռած, միտքըս շվար ու մոլո՛ր,
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսա մանկույթ ընկերիս.—
Ա՛խ, ընկեր իմ, կարոտս սրտով նրա առաջ վազեցի,
Ասի — «Բարո՛վ, անգին ընկե՛ր, շե՛ս ճանաչում դուն ինձի».
— Ախրը ես շատ փոխվեր էի... չը ճանաչեց նա ինձի:

Ցուպը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
Տեսա յարըս վարդը ձեռին՝ մենակ կանգնած դռան մոտ.
Ասի.— «Քուրի՛կ, ազիզ տեսրիդ արժանացա ես բարով...».
Նա էլ ինձի չը ճանաչեց... — աղբատ էի ու փոշոտ...

Գարդը սրտիս հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորըս.
Ասի.— «Նանի՛, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր
կընդունե՛ս»:

Ա՛խ, մեր՛իկ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց.
«Ա՛խ, բալա՛ ջան, դարիր բալա՛, էդ դո՞ւն ես...»¹:

Իր հիմնական գաղափարով և հարակից մտածված-րով (կյանքի բեռով մեջքը ծռած պանդուխտի վերադարձը հեռավոր երկրներից դեպի իր կարոտած հայրենիքը, նրա սրտառուչ հանդիպումը մանկույթ ընկերի, յարի և մոր հետ) «Պանդուխտ որդին» բալլադը համահնչուն է Իսահակյանի պանդխտության ու մոր թեմա-

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հտտ. 2, էջ 115:

յով գրված ժողովրդական ոճ ու ոգի ունեցող մի շարք լիրիկական երգերի («Հայրենիքես հեռացել եմ», «Ձմեռն անցավ» և այլն) հետ: Այն միաժամանակ հարադատորեն դրսևորում է դեպքերի բերումով հայրենիքից, յուրայիններից և առաջին հերթին իր սիրասուն մորից բաժանված և երկար տարիներ վերջինիս անմեռ կարոտը սրտում օտար երկրներում դեպքերած պանդուխտ բանաստեղծի անձնական հուզաշխարհը:

«Պանդուխտ որդին» բալլադը գրված է համապատասխան բանահյուսական նյութերի (երգ, վիպերգ և այլն) ստեղծագործական դրդումով: Հիշենք հատկապես դրանցից մեկը, որը տպված է 90-ական թվականներին լույս տեսած բանահյուսական-աղգագրական մի ժողովածուի մեջ՝ «Այրն պանդխտութենե կը վերադառնա յուր սիրելվույն քով, կինն չի ճանչնար զայրն, և կը խոսին հետևյալ անտունին» ծանոթության տակ.

Հարսնուկ, էլի, վեր եկու,
 Ես ի քու խարխալտ եմ եկեր:
 — Աչվիտ խարխալիս աչվին,
 Մանրտ անոր ծանր չի մանիր:

— Մարիկ, եկու դուռը բաց.
 Խարխալ որդեկտ իմ եկեր:
 — Գնա աս գեղին վերև,
 Հելպեթ աս գեղն ալ խան ունի,
 Մութն երթա ու լուսը գա,
 Մարիկն իր որդեկը ճանչնալ:

¹ Հ. Օ ա ն ի կ յ ա ն, Հնու թյուրք Ալնա, Թիֆլիս, 1895, էջ 432 - 433:

Չբավարարվելով վերոհիշյալ «անտունիի» և նման տիպի նյութերում հանդես եկող մոր վարքագծով (որ նա շճանաչելով իր զավակին, բավական սառն վերաբերմունք է ցուցաբերում նրա նկատմամբ), Իսահակյանն իր բալլադի մեջ շեշտել է մայրական սիրո դերազանցությունը: Նա ցույց է տալիս, որ՝ մինչդեռ ընկերը ու յարը չեն ճանաչում պանդխտության մեջ փոխված իրենց երբեմնի ընկերոջն ու սիրածին, մայրը՝ լսելով իր «ղարիբ բալայի» հարազատ ձայնը, անմիջապես նրա վզովն է ընկնում:

Իսահակյանի բալլադում հերոսը ոչ թե պանդխտն է առհասարակ, ինչպես այդ ժողովրդական հիշյալ երգի մեջ է, այլ պանդուխտ որդին, որ արված է՝ մոր և որդու փոխհարաբերության միջոցով մայրական սիրո ակտիվ բնույթը ցույց տալու համար:

Շեշտը իրավացիորեն դնելով մոր զգացմունքների բացահայտման վրա, Իսահակյանն իր գրվածքում ոչ միայն չի անտեսել պանդուխտի ծանր վիճակի պատկերման անհրաժեշտությունը, որը հիմնականն է ժողովրդական «անտունիի» մեջ, այլև ավելի ևս խտացրել է այստեղ եղած մոայլ գույները, շատ լավ իմանալով, թե ինչպիսի մեծ շարիք է եղել իր ժողովրդի համար պանդխտությունը:

«Մայր» (1907 թ.) ավանդավեպում Իսահակյանը արծարծել է մոր ծնողական սրտառուչ և անձնազոհ ակտուսիզմի գաղափարը, մի գաղափար, որն այնքան հարազատ էր մայրական սիրո խանդավառ երգչի պոետական հոգուն:

Բանաստեղծի վկայություններով տվյալ գործի համար իրեն նյութ է ծառայել ժողովրդական մի գրույց, որն

ինքը լսել է 1907 թ. գնացքով հայրենի Ղազարապատ գյուղից Ալեքսանդրոսով ուղևորվելիս:

«Գնացքում, զրույցի ժամանակ, —ասում է Իսահակյանը, — երբ խոսք բացվեց հարս ու սկեսուրի, մոր ու որդու փոխհարաբերության մասին, իմ զրուցակից Ղազարապատցի գյուղացիներից մեկը պատմեց իր լսած հետևյալ պատմությունը, որ և ես օգտագործեցի գրելով իմ «Մայրը» ավանդավեպը»:

Մի անգույթ ու շար հարս զրպարտությամբ ու խարդավանքով հարկադրում է ամուսնուն հեռացնել տանից իր սկեսուրին: Չկարողանալով դիմադրել կնոջ բնահաճույքին, որդին մի օր ստիպված պարկի մեջ դրած անտառ է տանում զառամյալ մորը և պարկի հետ միասին թողնում նրան խուլ անտառում: Վերադառնալիս նրա ականջին են հասնում լքված մոր բարեմախթության խոսքերը...¹

Վերոհիշյալ ժողովրդական ավանդավեպի տարբերակները մենք գտնում ենք Կովկասյան ժողովուրդների և ուրիշ ազգերի բանահյուսության մեջ:

Մշակելով իր լսած նյութը, Իսահակյանը նոր ձև ու կառուցվածք է տվել նրան, շափածո բանաստեղծության է վերածել այն, տիպականացրել դործող անձանց, ստեղծել է դրամատիկ տեսարաններ, կատարել նշանակալից հավելումներ ու ընդհանրացումներ:

«Մայրը» ավանդավեպը սկսվում է մի նախերգով, որը բացակայում է նրա սկզբնաղբյուրի մեջ: Ընթերցողին նախապատրաստելու նպատակով բանաստեղծը տալիս է աշնանային բնության տխուր պատկերը և իրեն

¹ Այս մասին մեզ պատմել է ինքը բանաստեղծը:

ուրաշարած ծանր խոհը՝ հին աշխարհում գոյություն ունեցող սոցիալական շարիքների ու նրա անմեղ զոհերը մասին:

Անտառներում՝ աշնան թափուր,
 Երբ թաց խավարն է իջնում,
 Երբ դաշտերում մերկ ու տխուր,
 Տուրտ քամին է շառաշում,—
 Ամեն անգամ ըզգում եմ նոր
 Զրույցն այս խեղճ պառավ մոր:
 Եվ խորհում եմ՝ թե արդյոք ո՞ւր,
 Մեզնից մոտիկ կամ հեռուն,
 Ո՞ր անտերունջ խեղճին հիմա
 Զարի ձևերն է հարվածում...¹:

Անգամ, բայց խիստ արտահայտիչ ու կոլորիտային նկարագրությունների ու դիալոգների միջոցով Իսահակյանը բացահայտում է ավանդավեպի գործող անձանց բնավորություններն ու էությունը. մորը՝ իբրև ֆիզիկական ծանր վիճակում գտնվող խոնարհ ու հեղ մի արարածի, տղային՝ իբրև բարի, բայց թշվառ ու թույլ մի էակի և հարսին՝ իբրև անգութ ու շար մեկի:

Առանձնապես աչքի են ընկնում բանաստեղծի գրչին պատկանող բնության գեղեցիկ պատկերները, սրունք օդտագործված են իբրև հոգեբանական զուգահեռներ՝ ավանդավեպի բովանդակության էական մոմենտներն ավելի ցայտուն դարձնելու համար:

Այդպիսի զուգահեռներից է ակամա հանցագործ որդու ծանր հոգեվիճակը ընդգծող հետևյալ դրվագը.

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 116:

Թշվառ մարդն էր. ճարը կտրված,
 Վերցրեց մորը պառավ,
 Անդուժ հարսի աչքի առաջ
 Պարկը դրեց, ուն առավ:
 Գլուխը կոր՝ ճամփա ընկավ,
 Միտքը՝ մռայլ ու խոլոր
 Սև ամպերից գիշերն իջավ,
 Ճամփան՝ մթին ու մոլոր¹:

Նման զուգահեռ է ավանդավեպի վերջաբանը, ուր
 իր ողջ վեհուժյամբ հառնում է մեր առաջ ծնողական
 ալտրուիզմի խոսուն անձնավորումն հանդիսացող սի-
 րող մոր հոյակապ կերպարը:

Աշնան քամին էր հեծկտում,
 Գայլն էր տալիս կալանչին,
 Ոտքը փոխեց, որ դառնար տուն,
 Մոր ձայնն հասավ ականջին.—

Երթաս քարով. աստված քեզ հետ,
 Ոտքըդ քարի թող չը գա.
 Տըղաս, վերցրու պարկը քեզ հետ,
 Պարկը տանը պետք կը գա²:

«Մայրը» ավանդավեպը դրելուց հետո, տարիներ
 անց, Իսահակյանը նորից է անդրադարձել նույն նյու-
 թին, դրելով «Մոր սիրտը» ավանդավեպը: Բանաստեղ-
 ծին, ինչպես ինքն է վկայում, ծանոթ են եղել տվյալ
 ստեղծագործության հայկական, ռուսական (Վ. Տոլստո-
 յի մոտ) և թյուրքական տարբերակները, որոնցից նա

¹ Ա.վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2,
 էջ 117:

² Նույն տեղում, էջ 118:

նկատի է ունեցել 1910 թ. Կարինում լսած հայկական վարիանսը:

«Մոր սիրտը» (1919 թ.) անձնագոհության հասնող մայրական սիրտ իր հիմնական գաղափարով, հարևան ման լինելով «Մայրը» ավանդավեպին, տարբերվում է սրանից բովանդակության ու սյուժեի առանձին մոտիվներով, գործող անձերով և վերջիններիս վարքագծով:

«Մայրը» ավանդավեպում՝ հարսը, ավելորդ համարելով տան համար «ոտ ու ձեռից ընկած» սկեսուրին, հարկադրում է ամուսնուն՝ կորցնել հարազատ մորը: «Մոր սիրտը» ավանդավեպում՝ սիրած աղջիկը ստիպում է սիրող տղային, իբրև ապացույց իր սիրո բերել հարազատ մոր սիրտը:

Առաջինի մեջ ամուսինը՝ պարկի մեջ դնելով անտառ է տանում մորը և թողնում նրան այնտեղ: Երկրորդի մեջ՝ սիրահար տղան սպանում է հարազատ մորը և բերում է նրա սիրտը:

«Մայրը» ավանդավեպում՝ լքված մայրը հիշեցնում է տղային շմուռանալ իր հետ տուն տանելու պարկը, որը կարող է պետք գալ նրանց: «Մոր սիրտը» ավանդավեպում՝ մոր սիրտը լեզու առնելով ցավակցում է սայթաքած տղային՝ «չի՞ ցավացել արդյոք նրա ոչ մի տեղը»:

Տարբեր է նաև «Մայրը» և «Մոր սիրտը» ավանդավեպերի կատարման արվեստը, նյութի մատուցման եղանակը և ժանրային ընդհանուր նկարագիրը:

«Մայրը» բնույթով ավելի մոտ է լիրո-էպիկական պոեմին կամ շափածո ռեալիստական նովելին: Նրա բնորոշ առանձնահատկություններն են՝ համեմատաբար ընդարձակ ծավալը, տիպականացված կերպարները,

բնության նկարագրությունները, հեղինակի լիրիկական շեղումները, ազգագրական-կենցաղային կոչորիտը, ոճի ու լեզվի մեջ առկա ժողովրդական տարրերը:

«Մոր սիրտը» տիպիկ ավանդավեպ է: Նրա բնորոշ առանձնահատկություններն են՝ փոքր ծավալը, կերպարների ուրվանկարայնությունը, բնության նկարագրությունների, հեղինակային շեղումների, ազգագրական-կենցաղային կոչորիտի բացակայությունը, հեքիաթային-Ֆանտաստիկ որոշ մոտիվների (մոր սրտի փոխարին սպանված այծյամի սիրտ բերելը, մոր հանված սրտի լեզու առնելը) առկայությունը, հիմնականում գրական լեզուն ու ոճը, կարճ ու հատու դիալոգները:

Չնայած վերոհիշյալ զգալի տարբերություններին, քննության առարկա երկու գործերն էլ յուրովի հաջող են և աչքի են ընկնում էմոցիոնալ ներգործման մեծ ուժով: «Մայրը» ազդում է ռեալիստական ոճով և հոգեբանական համոզչությամբ, իսկ «Մոր սիրտը»՝ իր հեքիաթային վառ ֆանտաստիկայով և «պայթուցիկ» վերջավորությամբ:

«Որդիական սեր» (1926 թ.) լեզենդ-բալլադում Իսահակյանը անդրադարձել է մոր և որդու փոխհարաբերության հարցին, բացահայտել որդիական սիրտ բնույթն ու էությունը՝ կապելով այն սոցիալական կյանքի պայմանների հետ: Բանաստեղծի վկայությամբ տվյալ ստեղծագործության նյութը ճապոնական է, որի մասին ինքը կարդացել է հայկական թերթերում:

Նյութական ու հասարակական տարբեր դիրք, կրթութուն և զբաղմունք ունեցող շորս որդիների կողմից իրենց մեռած մոր նկատմամբ ցուցաբերած համապատասխան վերաբերմունքի վերարտադրման միջոցով,

Քասահակյանը իր գրվածքում ակնարկում է այն ճշմարտությունը, ըստ որի սեփականատիրական հասարակության մեջ՝ նյութական բարեկեցությունը, բարձր կրթությունը, պաշտոնն ու դիրքը, որոնք գտնվում են վերնախավի ձեռքին, աղավաղում ու այլանդակում են մարդկային ամենաազնիվ զգացմունքները, այդ թվում նաև որդիական սերը: Նա միաժամանակ հաստատում է, որ անձնագոհության ընդունակ, իսկական որդիական անեղծ ու անկեղծ սերը, հիշյալ հասարակության մեջ պետք է փնտրել միայն ժողովրդի ծոցից դուրս եկած հասարակ մարդկանց մեջ:

Մի մայր ուներ շորս հատ որդի:
 Մեկը՝ ուսած, հաշակավոր,
 Ուներ ամբիոն վարժապետի.
 Սակայն մյուսը՝ կրոնավոր,
 Մի քահանա սրբակենցաղ.
 Եվ երրորդը՝ վաճառական,
 Լայն ձեռնարկներ, մեծ առուծախ.
 Իսկ վերջինը... Թափառական,
 Կարիքի մեջ՝ աղքատ ու խեղճ:

Երբ մահն եկավ, մայրը աստծուց
 Շնորհ խնդրեց—տեսնել շիրմից,
 Թե ինչպիսի՞ վերաբերում
 Պիտ ունենա որդիներից:
 Վարժապետը գրեց ներբող,
 Աղոթք կարդաց սուրբ քահանան,
 Եվ հարուստը նվիրեց փող.
 Բայց հեղ որդին Թափառական
 Բեկված սիրտը մորը բերեց...¹:

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, #2 144:

Մալալով փոքր իր այս դործի մեջ Իսահակյանը հատարել է սոցիալական բովանդակություն ունեցող մեծ ընդհանրացում:

3.

Ամենանվիրական ու հարազատ թեմաներից մեկը Իսահակյանի համար եղել է հայրենիքի թեման: Նրա ողջ ստեղծագործության մեջ և մասնավորապես ժողովրդական բանահյուսության ակունքների հետ կապված գործերում, մենք գտնում ենք տվյալ թեմայի գեղարվեստական մարմնավորման փայլուն նմուշներ:

Իր լավագույն հայրենասիրական գործերում բանաստեղծը գովերգել է սիրելի հայրենիքը, նրա բնությունը, աշխատասեր, ստեղծագործ ու տոկուն ժողովրդին՝ իր հարուստ ու հին կուլտուրայով, ազատության ու անկախության համար մղած դարավոր անդուլ պայքարով, լուսավոր ապագայի նկատմամբ ունեցած վառ հավատով:

Հայրենիքը Իսահակյանի համար եղել է՝ իր իսկ խոսքերով ասած՝ «հողով-սրտով դուրդուրված այն նվիրական հողը, ուր կան այնքան քաղցր ձայներ, հին-հին դարերից եկած, հարազատների ձայներ, նահատակների ձայներ, հերոսների ձայներ: Ուր կան մտերիմ դեմքեր, քնարական դաշտեր, վիպական լնձներ, մայրենի բարբառ, ժողովրդական երգի սրտագին մթնոլորտ, վերջապես հայ ժողովուրդը՝ աշխատավոր և արդար, Հայաստանի պատկանելի ժայռերից ծնված, քարից հաց հանող և քարից հրաշքներ կերտող հայ ժողովուրդը»¹:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 171:

Բանաստեղծի հայրենասիրական ստեղծագործությունների մշտաբորբոք պաթոսը եղել է հայ ժողովրդի՝ օտարերկրյա նվաճողների կողմից անցյալում ոտնահարված ու բռնադատված իրավունքների, նրա ազգային արժանապատվության պաշտպանությունը, ազատության երազը:

«Հայրենի հողը» (1920 թ.) լեզենդի հիմքում ընկած է հայրենի հողի նվիրականության գաղափարը, ազնիվ սխրանքի մղող նրա հզոր ուժի սիմվոլիկ խորհուրդը:

Իսահակյանի վկայությամբ նման մի զրույց ինքը լսել է հայրենի Շիրակում (Ղազարապատ գյուղում), իր եղբոր ընկերոջից: Ըստ այդ զրույցի՝ մի քաջ զորավար է լինում, որի սարսափից թշնամիները սիրտ շեն անում ոտք դնել նրա հայրենիքի սահմանները: Թագավորը, նախանձելով զորավարի համբավին, դավեր է նյութում նրա դեմ: Զորավարը զայրանալով թողնում է հայրենի երկիրը և հավատարիմ զինակիցների հետ հաստատվում ուրիշ երկրում: Օգտվելով քաջ զորավարի բացակայությունից՝ թշնամիները հարձակվում են նրա հայրենիքի վրա: Պատգամավորներ են դալիս և խնդրում զորավարին՝ վերադառնալ հայրենիք, սակայն նա մնում է անդրդվելի: Զորավարի գուժը շարժվում է միայն այն ժամանակ, երբ եկած նոր պատգամավորի ձեռքին տեսնում է իր հայրենիքի մի ամի հողը¹:

Հայրենի հողի վերոհիշյալ զրույցը վիպա-առասպելական տարբեր զգեստավորումներով մենք դա՛նում ենք ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների

¹ Ա.վ. Իսահակյան, Հայրենի հողը (հուշեր), տե՛ս «Հաստատանի կոչնակ», 1933, էջ 10—12:

ավանդական բանահյուսության մեջ: Հիշենք իբրև օրինակ՝ Արշակի և Շապուհի զրույցը հայկական հին վեպից («Պարսից պատերազմ»), Անթեյի հայտնի առասպելը՝ հունական դիցաբանությունից և այլն:

Քննության առարկա ստեղծագործությունը Իսահակյանը նախ մշակել է արձակ ձևով: Այն տեղ է գտել հարազատ Շիրակի և իր հայրենական տան մասին բանաստեղծի գրած գեղարվեստական հուշերի մեջ¹, իբրև այդ հուշերի ինքնուրույն դրվագներից մեկը:

Ժողովրդական զրույցի վրա Իսահակյանի կատարած աշխատանքը, հիմնականում, ընթացել է նրա լեզվի ու ոճի գրականացման, բովանդակության ճոխացման և դադափարական միջուկի բացահայտման ուղղությամբ: Բանաստեղծը մի քանի անգամով ընդլայնել է իր լսած պատմությունը, մտցրել մեջը այնպիսի նոր պատկերներ ու նկարագրություններ, ինչպիսիք են՝ օտարության մեջ զորավարի կատարած ուրախության ու գինարբուքի նկարագրությունները, հայրենիքից նրա մոտ ժամանող պատգամավորությունների պատմությունները և այլն: Ընդգծելու համար հայրենի հողի մեծ խորհուրդը, նա կատարել է մի շարք լիրիկական շեղումներ, ինչպիսիք են՝ գուսանի երգը հայրենի ձյունաթագ լեռների, ցորենի ոսկեծուփի արտերի, հայրենի խրճիթների նվիրական ծուխի, աչազեղ աղջիկների մասին, զորավարի ապրումների վերարտադրումը օտարության մեջ հայրենիքից բերված հողը տեսնելու պահին, և այլն:

¹ Ա.վ. Իսահակյան, հայրենի հողը (հուշեր), տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1933, էջ 10—12:

Սակայն, Իսահակյանը չի բավարարվել միայն վերոհիշյալ արձակ մշակումով: Նկատի ունենալով ավյալ դրույցի կարևորությունը, նա տարիներ հետո նորից է անդրադարձել նույն նյութին, վերամշակել ու վերաստեղծել է իր նախկին գործը:

Արձակ խոսքը փոխարինվել է բանաստեղծական շափածոյով, որն աչքի է ընկնում իր ութմիկ-երաժրշտական ոտանավորով, ինքնատիպ ու գունեղ պատկերներով, էմոցիոնալ հագեցվածությամբ:

Զրույցի բովանդակության մեջ մտցվել են մի շարք էական փոփոխություններ, որոնք բարձրացրել են նրա սոցիալ-գաղափարական միտվածությունը, հոգեբանական-գեղարվեստական համոզչությունը: Այսպես.

Արձակ վարիանտի մեջ խոսելով հայրենապաշտպան զորավարի մասին, Իսահակյանը ասում է.

«Մի քաջ և անվեհեր զորավար է լինում. նրա սուրբ մի անգամ մերկանալով հրբեք առանց հաղթանակի նորից պատյան չի վերադարձել: Նրա սարսափից թշնամիները բնավ սիրտ չեն արել այդ երկրի սահմանները կոխել»¹:

Նույն հատվածը նա շափածո վերամշակման մեջ ընդարձակելով ու ճոխացնելով, դարձրել է բանաստեղծական այսպիսի մի գեղեցիկ դրվագ.

Եղել է հնում, պերճ արևելքում
 Մի քաջ զորավար՝ հայրենապաշտպան,
 Առանց ընկճելու երկրի թշնամուն
 Նրա սուրբ հրբեք չի մտել պատյան:

¹ Ա. վ. Իսահակյան, Հայրենի հողը (հուշեր): Երևան «Հայաստանի կոչնակ», 1933, էջ 10—12:

Նըրա արձակած տեզը խողական
 Թշնամու հողում ցըցվել է ահեղ,
 Նըրա սարսափը օրհասի նման
 Թշնամու գլխին կախվել ամեն տեղ:

Նվ ժողովրդի քնարը ազնիվ
 Փառարանել է անունը նըրա,
 Հաղթանակները փայլուն ու անթիվ
 Սուրբ հայրենիքի ոսոխի վըրա...¹:

Արձակ վարիանտի մեջ խոսելով քաջ զորավարի նկատմամբ թագավորի ապերախտ վարմունքի մասին, Իսահակյանն ասում է.

«Թագավորը նախանձում է զորավարին, որի փառքը նսեմացրել է իր անունը, և դավեր ու դարան է լարում զորավարին կորստի մատնելու»²:

Չափածո վերամշակման մեջ այս նույն դրվագը հարստացել է հոգեբանական և դրամատիկական այսպիսի խոսուն մոմենտներով:

Բայց թագավորը՝ նենգ ու փոքրոգի,
 Նախանձում էր խիստ նըրա հռչակին,
 Վառ լույսերի մեջ նըրա մեծ փառքի
 Զգում էր իրեն նվաստ ու շնչին:

Անհուն նախանձի կրքով տոչորուն՝
 Մի օր խնջույքում արքայական տան,
 Մի զորականի՝ անհայտ, անանուն,
 Ժպտաց սիրալիր, դրվատեց նըրան:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 134:

² Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Հայրենի հողը (հուշեր), ակն «Հայաստանի կոչնակ», 1933, էջ 10—12:

Եվ նա փոխարեն զորավարին մեծ՝
 Տեղ տվեց նրբան առնթեր դահի,
 Հյուրերին բոլոր՝ զարմանք պատճառեց
 Այնքան ապերախտ վարժունքն արքայի:

Մյուս օրը շքով այն զորականին
 Սպարասկառի սուր տվեց արքան,
 Եվ հրամանատար կարգեց բանակին,
 Իսկ զորավարին՝ թիկնապահ նրբան¹:

Արձակ վարիանտի մեջ հարևանցիորեն է նշվում այն մասին, թե ինչպես օգտվելով զորավարի բացակայությունից, թշնամին հարձակումներ է կատարում նրա հայրենիքի վրա:

Չափածո մշակման մեջ մանրամասն նկարագրվում է թշնամու ներխուժումը, նրա գործած ավերն ու արյուներ, ժողովրդի կրած տառապանքները:

Արձակ վարիանտի մեջ ասված է, որ ժողովուրդը տեսնելով երկրի ծանր դրությունը՝ «խնդրում է թագավորին, որ պատվով և հարգանքով հրավիրե զորավարին դեպի հայրենիք»:

Չափածո մշակման մեջ ժողովուրդը ոչ թե խնդրում, այլ պահանջում է այդ.

Խուռն խոնվեց հրապարակներում
 Ժողովուրդը ողջ, հեղեղանման,
 «Ո՛ր է, դոչեցին, զորավարը մեր՝
 Սուրբ հայրենիքի փրկիչ ու պաշտպան»:

Նախարարներին ու թագավորին
 Կարդացին բուռն, խիստ սպառանալիք,

¹ Ա.վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 134—135:

Որ խնդրեն իրենց քաջ զորավարին,
Պատվով ու փառքով բերեն հայրենիք¹:

Այս և նման փոփոխություններն հետևանքով «Հայրենի հողը» զրույցը դարձել է Իսահակյանի՝ նյութով ժողովրդական, բնույթով զրական ուշագրավ ստեղծագործություններից մեկը, նրա հայրենասիրական պոեզիայի մի գոհարը:

«Ժողովրդի բնարը» (1917 թ.) լեզենդի միջոցով Իսահակյանը վրեժի ու ատելության խոսք է ասում իր հայրենիքի երգվյալ թշնամիներին՝ թյուրք ջարդարարների հասցեին:

Իր գրվածքի համար բանաստեղծն իբրև նյութ օգտագործել է սերբական ժողովրդական լեզենդներից մեկը: Ըստ այդ լեզենդի՝ Թոփալ փաշան սերբ ժողովրդիկն արյան մեջ խեղդելուց հետո, մեծ խնջույք է սարքում, որտեղ, իր արյունոտ փառքի գովքն անելու համար, նա կանչել է տալիս սերբ համբավավոր գուսանին՝ ծերուկ Միրկոյին: Հակառակ փաշայի խոստումներին ու սպառնալիքներին, Միրկոն ոչ միայն հրաժարվում է նրա գովքն անելուց, այլև բուլորի ներկայութեամբ անարդանքի սյունին է դամում իր հայրենիքի թշնամուն: Նա գետին տալով փշուր-փշուր է անում իր քնարը և ինքն էլ անշնչացած ընկնում քնարի կողքին: Թոփալ փաշան, որն ըստ ավանդության ազգն ուրացած մի սերբ էր, ահանատես լինելով այդ տեսարանին, խղճի ուժեղ խայթ է զգում և, ըստ հին սովորության, բարձրացնելով ձեռքը՝ խաչակնքում է երեսը: Ապա նա ծուն-

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 135:

Ժողովուրդի քրոջ.

(Արեւմտեան Ասիայ).

Քրայնագրական և հարթագրական կտրուկներ

Արեւմտեան Ասիայի մասին.

Եւ հարցազնային և պատմական արձագանքներ
հետազոտող Գրական ընկերութեան հարցազնային կտրուկներ:

Արեւմտեան Ասիայի մասին, արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, արեւմտեան Ասիայի մասին:

Արեւմտեան Ասիայի մասին, Արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, Արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, Արեւմտեան Ասիայի մասին

Արեւմտեան Ասիայի մասին, Արեւմտեան Ասիայի մասին:

Ա. Բ. Իսահակյանի «Ժողովուրդի քրոջ» լեզուի սկզբնական
խմբագրութիւնը (1917 թ.)

կի է գալիս Միրկոյի գիակի առաջ և վերցնելով գեանից կույր գուսանի ջարդված քնարը մոտեցնում է իր շրթունքներին: Խնջույքին մասնակից թյուրք զինվորներից մեկը շկարողանալով հանդուրժել Թուփալ փաշայի ստորացումը «դյավուրի» առաջ, թրի մի հարվածով թոցնում է նրա գլուխը¹:

Մշակելով տվյալ լեզենդը Իսահակյանը էական փոփոխություններ է մտցրել նրա բովանդակության մեջ, ընդգծել է լեզենդում արտահայտված հայրենասիրական և հերոսական պաթոսը, վերաստեղծել գործողություններն ու կերպարները, շափածո բանաստեղծական խոսքի վերածել արձակ շարադրանքը:

«Ժողովրդի քնարը» լեզենդի պատկերավոր և ուժեղ դրվագներից են՝

Թյուրք ենիշերիների յաթաղանի տակ հեծող Սերբիայի ողբերգական վիճակի նկարագիրը (որն այնքան նման էր բանաստեղծի սիրելի հայրենիքի վիճակին).

Փայլատակում է յաթաղանը կես
Արյունաթաթախ Սերբիայի վրա.
Նվ կանչում է՝ ազատներն արբշիս
Դիերով ծածկված դաշտերի վրա...²:

Աբդուլլահ փաշայի (ըստ ժողովրդական լեզենդի՝ Թուփալ փաշայի) և նրա արյունարբու արբանյակների խրախճանքի նկարագիրը.

Բազմել է փաշան սագաֆե թախտին,
Ոսկե գավաթով շերբեթ է խմում,

¹ La serbie Legendaire, Paris, 1917, էջ 122—125.

² Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 127:

Ու երազում է՝ աչքը դաժաթին,
Բե ուսկոկների արյունն է խմում:

Փաշայի շուրջը նստել են շարքով
Ենիշարները՝ մռայլ ու դաժան,
Մեղանն է բուրում ճոխ խորտիկներով,
Շերբեթն է հոսում Գոնայի նման:

Զվարճանում են ենիշարները,
Հաշվում են իրենց սուր յաթաղանով
Մեկին թուրած սերբ դուխաները,
Լուս հստում են դիվական խանդով¹:

Մերուկ Միրկոյի հերոսական ու հմայիչ կերպարը,
իր կորովի կամքով ու անընկճելի ոգով, իր անձնագոհ
հայրենասիրությամբ ու ջերմ ժողովրդասիրությամբ:

Տեսնում է Միրկոն—որդիներն ուրախ
Տուն են դառնում ողջ, ազատ, միատեղ,
Բայց լուս է նորից, գուշեն ուսից կախ,
Լուս է խնջույքի դահլիճը շքեղ...²

Բանաստեղծական սլատկերավոր խոսքի խսկական
դեղարվեստական մի քանդակ է «Ժողովրդի քնարը» լե-
դենդի այն կտորը, ուր տրված է Աբդուլլահ փաշայի ու
Միրկոյի հակադրությունը:

Ինչպես բորենին՝ որսին սկընդեա՝
Զորել է փաշան սադաֆե թախտին,
Իսկ Միրկոն, ինչպես ամսրոպ մթնաժեռ,
Ըմրոստ Բալկանի խրոխտ ճակատին³:

¹ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2,
էջ 127:

² Նույն տեղում, էջ 128:

³ Նույն տեղում, էջ 128—129:

Իսահակյանը էական փոփոխութեան է ենթարկել հատկապես սերբական լեզենդի վերջավորութեանը: Քանաստեղծն իր գրվածքն ավարտում է ոչ թե ծերունի գուսանի մահով և գանդանաբարո փաշայի զղջման ու սպանութեան պատմութեամբ, ինչպես այդ ժողովրդական լեզենդի մեջ է, այլ Միրկոյի կողմից Աբդուլլահ փաշային ուղղված բողոքի ու ցասման զայրագին խոսքերով, որ շատ ավելի համոզիչ ու ազդեցիկ է.

Միրկոն ցասումով կանգնում է սաքի.
Զարկում է թափով գուսնն հատակին,
Եվ երեսնիվեր ահեղ փաշայի
Միրկոն հաղթական ճշում է ուժգին.
— «Ո՛վ սրիկաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել,
Սակայն խմացե՛ք,
Որ ժողովրդի քնարը երբեր
Չի կարող ստել...»¹

Ժողովրդական գուսանի վերոհիշյալ խոսքերի միջոցով Իսահակյանը դրսևորել է իր նողկանքն ու ատելությունը բոլոր ժամանակների Աբդուլլահ փաշաների նկատմամբ, որոնք երբևէ փորձ են արել ոսկով կամ ուժով իրենց բուժ կամքին ենթարկելու ժողովրդի քնարը:

«Յանվեի վրեժը» (1936 թ.) լեզենդի հիմքում ընկած է հայրենասեր հերոսի հասարակական վարկի ու վարքագծի հարցը: Իր գրվածքի համար բանաստեղծը նյութ է քաղել Մովսեսի ու Յահվեի մասին «Հին կտա-

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ 2, էջ 129:

կարան»-ի մեջ և այլուր տեղ գտած հրեական ժողովրդի վիպա-առասպելական մոտիվներից:

Ըստ այդ մոտիվների՝ Նդիպատոսում ապրող հրեաների (իսրայելացիների) ցեղը բնաջնջու նպատակով եգիպտական փարավոնը կարգադրում է դայակների ձեռքով ոչնչացնել տալ բոլոր նոր ծնված հրեա երեխաներին: Դիպվածով ազատվում է մի հրեա մանուկ, որին որդեգրում է փարավոնի անդամակ աղջիկը և տալիս նրան Մովսես անունը: Մեծանալով Մովսեսը դառնում է փարավոնների տոհմի միակ ժառանգը: Երբ նա իմանում է իր ով լինելը, նվիրվում է ցեղակիցների փրկության գործին: Մեծ ջանքով և ծանր զրկանքներով Մովսեսը համախմբում է օտարության մեջ դեղերող իսրայելացիների ցրված տոհմերը, ազատում նրանց փարավոնների լծից և բերում հասցնում է մինչև Մովսեսի լեռները: Չնայած Մովսեսի կատարած վերոհիշյալ մեծ միսիային, արդարադատ Յահվեն (հրեական աստվածը) շարաշար պատժում է նրան: Յահվեի թեյադրանքով Մովսեսը մեռնում է Ավետյաց երկրի շեմքին՝ շարժանանալով հայրենի հողը սաք դնելու բախտին, որովհետև նա պատանի հասակում ուրացել էր իր ազգությունը:

Մշակելով հնադարյան վիպա-առասպելական հիշյալ մոտիվները, Իսահակյանը նորոգ հնչեղություն է հաղորդել դրանց:

Մի կողմ թողնելով ավանդական բանահյուսության մեջ եղած մանրամասները, նա օգտագործել է միայն Մովսեսի կյանքի ու վարքագծի էական դրվագները, հաջորդական ու տրամաբանական կապ ստեղծել վերջիններիս մեջ:

Իր գրվածքում բանաստեղծը վերարտադրել է հարազատ ժողովրդի կրած տառապանքների համար Մովսեսի ունեցած հոգեկան ծանր ասլրումները.

Միակ ժառանգն էր Մովսեսը ներհուն
Փարափոնների հզոր բազուկի,
Սակայն դիտեր, որ արյունն է կրում
Մեծ Իսրայելի ընտրագույն ազգի:

Իր եղբայրներին տեսնում էր գերի,
Գիշեր ու ցերեկ խոշտանգված մշակ,
Կարկառների մեջ դշխեմ բուրգերի
Քաղցած ու ծարավ, մտրակների տակ:

Եվ մորմորում էր սիրտը Մովսեսի,
Վրեժ էր ուխտում մեծ Տան դեմ դաժան...¹

Նկարագրել է Մովսեսի մաքառման ու պայքարի գլխարուձյուններով լի հերոսական ուղին, որն ընտրում է նա հարազատ ժողովրդին փրկելու համար:

Երբ փարափոնի երկրից անօրեն
Մինչ ափը կապույտ՝ Ավետյաց Երկրի
Տոհմերի հովիվ Մովսես մարգարեն
Ազատեց, բերեց զարմն Իսրայելի,—

Երբ քառասուն ամ հետո ամբոխի հետ
Տոկաց, դեղերեց Սին անապատում,
Կրեց բազմազան անցքեր շարադետ,
Մարտնչեց անդուլ, տրնեց անապատում,

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 154:

Եվ երբ ծերունու ծունկերն հողնատանջ
 Սուրբ հողում հիմա պիտի հանդշին,
 Մահը՝ անողորք և խտտապահանջ
 Կանգնեց սրբամերկ նրբա առաջին¹:

Արձանադրել է այն ծանր պատիժը, որ ստանում է
 Մովսեսն արդարադատ Յահվեից՝ պատանի հասա-
 կում իր արյունն ու ցեղը ուրացած լինելու համար:

Եվ արդարադատ Յահվեն խտտաբար
 Պատժեց Մովսեսին, իրրև դրուժանի.
 Ոտար վայրում նա մեռավ տենչավառ,
 Հայրենի հողին շեղավ արժանի²:

Մեր օրերում մշակելով հրեական հին ազանդավեպը,
 Իսահակյանի նպատակն է եղել ընդդեմ այն ճշմար-
 տությունը, ըստ որի հայրենասեր հերոսը պետք է մին-
 չև վերջ հետևողական ու անբասիր լինի իր վարքագծի
 մեջ և իր մեծ գործի ճանապարհին թույլ չտա ոչ մի
 հանցանք կամ դանցանք:

4.

Ավ. Իսահակյանի ինչպես շափածո, այնպես էլ ար-
 ձակ ստեղծագործությունների մեջ, այդ թվում նաև նրա
 բանահյուսական բնույթի գործերում, կարևոր տեղ է
 գրավում սոցիալական անհավասարության և դասա-
 կարգային պայքարի թեման:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2,
 եջ 154:

² Նույն տեղում, էջ 154—155:

Հասարակական կյանքի ցավոտ հարցերը միշտ եղել են բանաստեղծի ուշադրության կենտրոնում, խռովել են նրա հանդիսար, խորապես հուզել նրա պոետական զգայուն հոգին:

«Պատանի հասակիցս, — խոստովանում է Իսահակյանը, — ինձ մշտապես հուզել է, մտալլկել է աշխարհիս մեջ գոյություն ունեցող շարիքը, մարդկությունը տառապեցնող շար իրերը — աղքատությունը, շահագործում, սճիրներ: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ և այդ շարիքները վերացնելու գործը, փրկության միջոցները»¹:

Իր ստեղծագործությունների մեջ Իսահակյանը պատկերել է գյուղի և քաղաքի աշխատավոր մասսաների կրած անլուր տառապանքները: Նա մեծ ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ աշխատավոր հայ ժողովուրդը դարերի ընթացքում ճնշվել ու հարստահարվել է ո՛չ միայն օտար կեղեքիչներից, այլև իր ազգային տերերից՝ սեփական աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչներից:

Բանաստեղծը անողոք կերպով մերկացրել է իշխանության ու օրենքների դասակարգային-շահագործողական էությունը, ցույց տալով, որ մասնավոր սեփականատիրական կարգերում դրանք կոշված են պաշտպանելու տիրող դասակարգի շահերը և ոտնահարելու աշխատավոր ժողովրդի իրավունքները:

Յուրովի շարունակելով ու զարգացնելով հայ դեմոկրատական գրականության քննադատական ուղղու-

¹ Ա. Վ. Իսահակյան, Իմ ազատ և ստեղծագործ ժողովրդի հետ, տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1937, 23 ապրիլի:

թյան առողջ տրագիցիաները, Իսահակյանը դրսևորել է «դառը դատող և դատարկ նստող» աշխատավորական մասսաների մեջ հասունացող դժգոհությունն ու բողոքը տիրող կարգերի դեմ, նրանց ձգտումը թոթափելու այդ կարգերի անարդ լուծը:

Բանաստեղծի լավագույն գործերը, անկախ դրանց ժանրային, ոճական և այլ տարբերություններից, ներթափանցված են շրջապատի իրականության նկատմամբ խորը դժգոհության տրամադրությամբ, լուռն ձգտումով դեպի լավագույն պայագան, ժողովրդական ստեղծագործությանը հատուկ այնպիսի բնորոշ առանձնահատկություններով, ինչպիսիք են՝ լավատեսությունը, հումանիզմը, վառ հավատը ժողովրդի անսպառ ուժերի նկատմամբ:

«Ա.րևի մոտ» (1905 թ.) հեքիաթ-նովելում այն միտքն է արծարծվում, որ աղքատ մարդիկ չպիտի օգնություն հուսան հարուստներից:

Իսահակյանը հուզիչ ձևով պատմում է այն մասին, թե ինչպես «հարուստ տների» բնակիչները սառը անտարբերությամբ են վարվում փողոցում անօղնական մնացած մի որբ երեխայի նկատմամբ, և թե ինչպես «խեղճ խրճիթի» բնակիչ «սարի հովիվը» սիրով ու խանդաղատանքով հյուրընկալում է նրան¹:

Այս գողտրիկ ստեղծագործության ինչպես մտահղացումը, այնպես էլ սյուժեն ու գաղափարը՝ հեղինակինն են: Ժողովրդական բանահյուսության հետ այն կապվում է հեքիաթային այնպիսի մոտիվներով, ինչպիսիք են.

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 257—258:

1. Որք երեխայի ճամփորդությունը դեպի «բարի» արևը, որը հիշեցնում է ժողովրդական հեքիաթների հերոսի կատարած դժվարին ճամփորդությունները . դեպի հեռավոր կախարդական վայրերը:

2. Որք երեխայի հանդիպումը սարի հովվի հետ, որը նման է ժողովրդական հեքիաթների հերոսի հանդիպումներին՝ ճամփաբաժան վայրերում նստող ծերունու, բաղաճների արվարձանում ապրող բարի պառավի հետ, և այլն:

3. Որք երեխայի սիմվոլիկ երազը՝ արևի հետ իր ունեցած ջերմ ու սրտառուչ հանդիպման մասին, որի նման պատմություններ հանդիպում ենք ժողովրդական հեքիաթների ու ավանդությունների մեջ:

«Մեծ նշմարտությունը» (1938 թ.) առակ-զրույցում Իսահակյանը պատկերել է հրամայողների ու վայելողների անխիղճ և գոռոզ հոգին և աշխատավորների ու առանջվողների դառնագին վիճակը:

Իր այս գրվածքի համար բանաստեղծը ստեղծագործական դրդում է ստացել թատերական գործիչ և դրամատուրգ Էմին Տեր-Գրիգորյանի պատմած մի զրույցից, ըստ որի՝ մի հարուստ մարդ, որը շարունակ դժգոհ էր իր մոտ օրավարձով աշխատող բանվորներից՝ կարճ և անարդյունք համարելով նրանց աշխատանքային օրը, միայն այն ժամանակ է սկսում զգալ նրանց ծանր դրությունը, երբ, դեպքերի բերումով, աղքատանում է և ստիպված է լինում օրավարձով աշխատել ուրիշների մոտ¹:

¹ Այս մասին մեզ պատմել է ինքը բանաստեղծը:

Հիմք ընդունելով վերոհիշյալ զրույցը, Իսահակյանը ստեղծել է բովանդակությամբ ու արվեստով նոր որակի առակատիպ մի նովել:

Է. Տեր-Գրիգորյանի պատմած զրույցի ազահ հարուստը բանաստեղծի գրչի տակ դարձել է տիպական մի կերպար, որը խտացնում է իր մեջ իր նմանների բնավորության ու հոգեբանության բնորոշ գծերը:

Ահա թե ինչպես է նա ներկայանում մեզ՝ իր և հեղինակի մտքերի ու դատողությունների լույսի տակ:

«Սարսափելի է, գրեթե դեռ գործ չտեսած հասնում է օրավարձի դառն վայրկյանը: Ի՞նչ է նշանակում այս: Մի՞թե իր դեմ դավադրություն կա կազմված: Չէ՞ որ եկեղեցին, կարծես դիտմամբ, առավոտյան այնպես ուշ է զանգերը տալիս, իսկ երեկոյան այնպես կանուխ, շափազանց կանուխ: Բայց արև՞ը — արևն անկաշառ է անշուշտ, սակայն ինչո՞ւ նա էլ այնպես շտապ կտրում է իր երկար ուղին՝ արևելքից արևմուտք: Եվ սրտնեղում է հարուստ մարդը, խիստ հրամաններ է արձակում, որ եռանդուն աշխատեն, արագաշարժ լինեն, շղանդաղեն, շծուկանան: Բարկանում-զայրանում է աջ ու ձախ ամեն բանվորի վրա, սպառնում է զրկել օրավարձից, սպառնում է հանել գործից...»¹:

Կարևոր նորմուծություն է ազահ հարուստի ազքատանալու պատմությունը, ուր խոսվում է արտաքին թշնամիների գործած ավերի ու ավարի մասին, որն այնքան բնորոշ է եղել Հայաստանի անցյալի համար:

«Եղավ, որ տարիներ հետո, թշնամին խուժեց, այդ քաղաքը, ուր ապրում էր մեծահարուստ մարդը:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 283:

Ավարի տվեց թշնամին նրա գույքը, կողոպտեց քաղաքացիներին մինչև վերջին թելը, ավերեց ու հրդեհեց ամբողջ քաղաքը, բնակիչներից շատերին կոտորեց, շատերին գերի տարավ, ոմանք էլ փախան՝ հազիվ ազատված սրից ու հրից:

Հին հարուստը՝ հիմա կողոպտված ու աղքատ, գնաց մի ուրիշ երկիր, շեն ու խաղաղ մի օտար քաղաք»¹:

Իսահակյանը բավական հանգամանորեն նկարագրել է այն հեղաշրջումը, որ կատարվում է ազահ հարուստի կենսազգացողության մեջ, երբ նա, կորցնելով իր ունեցվածքը, ստիպված է լինում օրավարձով աշխատել:

«Արևի հետ ելնում էր աշխատանքի և արևի մայր մտնելու հետ, բանթող, գնում էր հանգստանալու: Բայց ինչքա՛ն, ինչքան երկար է օրը — ծա՛նր, ծա՛նր, դրժվարին: Քարացել է ժամանակը և չի շարժվում: Այդ ե՛րբ էր, որ լույսը ծագեց. շատ վաղուց էր այդ, բայց տակավին կեսօր չկա, իսկ արևն իր բոլոր կրակը թափում է նրա կոնակի վրա: Ինչքա՛ն, ինչքա՛ն հողնած է, քաղցած, ծարավ. ծնկները ծալվում են տակը, այնինչ օրը դեռ չի թեքվել...»²:

Առանձնապես կարևոր է նշել տվյալ առակ-նովելի «բարոյական եզրակացությունը», որը սոցիալական նշանակալից մի ընդհանրացում է սեփականատիրական աշխարհի մասին, անողոք մի դատավճիռ այդ աշխարհի տերերի գլխին:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 283—284:

² Նույն տեղում:

«Եվ երբ մի օր ուժասպառ և հոգնած ընկավ գետին և երբ լսեց իր դլխի վերև կանգնած անսիրտ գործատիրոջ հայհոյանքն ու զայրույթը, — այն ժամանակ միայն տեսավ հրամայողների և վայելողների անխիղճ և գոռոզ հոգին, և աշխատավորների ու տանջվողների դառնագին վիճակը: Այն ժամանակ միայն հասկացավ և զգաց արյան բուրբ կաթիլներով կյանքի մեծ ճշմարտությունը՝ տերերի կողմից երբեք չհասկացված, հարուստների կողմից երբեք չզգացված»¹:

«Պարոն Թիդմանը» (1938 թ.) վերնադրով դանիական հին ժողովրդական երգի մեջ պատկերված է աշխատավոր ժողովրդի ըմբոստացումն ու պայքարը սոցիալական անարդարության դեմ: Երգի համառոտ բովանդակությունը հետևյալն է:

Մեծահարուստ ազնվական Պարոն Թիդմանը՝ օրը ծագելուն պես քեֆով սկսում է իր արդ ու վարդը (հաղնում ու կապում է իր թանկագին շորերը): Զուգվել-զարդարվելուց հետո նա անմիջապես գնում կանգնում է գյուղի հրապարակում և նոր հարկեր է պահանջում ժողովրդից: Մի ծերունի գյուղացի սաստիկ վայրանալով կարգադրում է ժողովրդին տեղից շարժվել և պատի պես ամուր շարվել պարոնի շուրջը, որպեսզի նա չկարողանա փախչել: Դրանից հետո նա ծանր բռունցքով խփում է Թիդմանին, որը անմիջապես երեսն ի վայր տատալվում է գետին և փչում հոգին: Թիդմանի մահով գյուղացիներն սկսում են ազատ շունչ քաշել:

Դանիական աշխատավոր գյուղացիության՝ տեղա-

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 284:

կան ֆեոդալների դեմ մղած պայքարի մասին վիպող այս երգը Իսահակյանի ուշագրությունը գրավել է իր ազատասիրական ըմբոստ ոգով, ուրույն կոլորիտով և ոնալիստական ոճով:

Կարևոր դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ հիշյալ երգը սիրվել, գնահատվել ու թարգմանվել է Ֆ. Էնգելսի կողմից:

Իսահակյանի թարգմանությունը, ինչպես ինքն է վկայում, կատարված է Էնգելսի թարգմանությունից, որի առթիվ նա գրել է. «Այս երգը շատ սիրել է Ֆրիդրիխ Էնգելսը և 1865 թ. թարգմանել է գերմաներեն: Մեր թարգմանությունը Ֆ. Էնգելսից է»¹:

«Պարոն Թիդմանը»² ժողովրդական բանահյուսությունից Իսահակյանի կատարած լավագույն թարգմանություններից մեկն է: Այն հարազատորեն վերարտադրում է բնագրի ոգին ու շունչը, նրա բնորոշ կոլորիտը և աչքի է ընկնում իր կենդանի ու հյութեղ ոճով, ժողովրդական բառ ու բանի վարպետ օգտագործումով:

«Սասմա Մհեր» վիպերգը: Ավ. Իսահակյանի սոցիալական թեմատիկա ունեցող բանահյուսական գործերի, ինչպես և նրա ողջ ստեղծագործության մեջ, ակնառու տեղ է գրավում «Սասմա Մհեր» վիպերգը: Վերջինս գրված լինելով 1919 թ., առաջին անգամ լույս է տեսել 1922 թ. Վիեննայում, և վերահրատարակվել, հիմնովին վերամշակված ձևով, 1938 թ. Երևանում:

Իր գրվածքի նյութը Իսահակյանը, հիմնականում,

¹ «Նորհրդային Հայաստան», 1938, 20 հոկտեմբերի, № 242:

² Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 206—207:

քաղել է «Սասունցի Դավիթ» էպոսից, հատկապես վերջինիս 4-րդ ճյուղից, որն հայտնի է՝ «Պատիկ Մհեր» կամ «Փոքր Մհեր» անուններով: Այստեղից են վերցված «Սասմա Մհեր» վիպերգի սյուժետային գլխավոր գիծը, այնպիսի կարևոր մոտիվներ, ինչպիսիք են՝ Մհերի ծնունդն ու աճը, հորեղբոր կողմից որդեգրվելը, կապուտկող (Խանդութի հոր մոտ) ուղարկվելը, Դավիթի ձիուն և զենք ու զրահին տիրանալը, հեղեղված գետի ջուրը երկու մասի բաժանելը, վազրին սպանելը, լեռների մեջ բերդ կառուցելը, Ագռավու քարում փակվելը, հովվի այցի դալը Մհերին և այլն:

«Սասունցի Դավիթ» էպոսի Փոքր Մհերի ճյուղից է վերցված Իսահակյանի վիպերգի հերոսը՝ իր դիմանկարի մի քանի հիմնական դժերով (Մհերի ֆիզիկական արտակարգ ուժը, հայրենական տնից վտարանդի լինելու հանգամանքը, «չար աշխարհից» դառնանալն ու դժգոհելը, անժառանգ ու անմահ մնալը և այլն): Նույն սկզբնաղբյուրից են սերում նաև «Սասմա Մհեր» վիպերգի մյուս կարևոր գործող անձինք (Մհերի հորեղբայր Ճընճըղափորիկը, քեռին՝ Թեա-Թորոսը և այլն):

Իր վիպերգի հիմնական և առաջատար դադափարը ևս՝ աշխարհում ռամկի օրենք և իրավունք հաստատելու անհրաժեշտության մասին, Իսահակյանը վերցրել է ժողովրդական համապատասխան սկզբնաղբյուրից:

Բանաստեղծի ձեռքի տակ են եղել «Սասունցի Դավիթ» էպոսի բազմաթիվ տպված ու ձեռագիր վարիանտներ, այդ թվում նաև 1902 թ. Բասենում իր կողմից գրի առնված «Փոքր Մհերի» պատմությունը:

«1902 թվականի սեպտեմբերին, — ասում է Իսահակյանը, — Բասենի Զոլախլի գյուղում մշեցի որմնա-

// 1902 թ. Երևանի քաղաքի քաղաքապետի անունով Բաղրամյան

Երևանի քաղաքի քաղաքապետի անունով:

— 11-րդ հոկտեմբերի 1902 թ. Երևանի քաղաքապետի անունով:

Տեղի քաղաքապետի (Բաղրամյան) անունով: — 11-րդ հոկտեմբերի 1902 թ.

Երևանի քաղաքապետի անունով: — 11-րդ հոկտեմբերի 1902 թ.

1902 թ. Բաղրամյան անունով Բաղրամյանի լատինատառ անունով:

Սամա Մանուկյան (Ինքնագիր)

դիր մի վարպետ ինձ պատմեց (տետրակներիս մեկի մեջ մինչև այսօր պահած ունեմ նրա խոսքերը), որ Մհերը դուրս պիտի ելնի, երբ ռամկուծյունը աշխարհում տիրող լինի: Ռամկուծյունը նրա խոսքն է: Մհերը հոր անեծքի տակ, որովհետև նրան գոտեմարտի մեջ գցել է գետին, տնից զրկված շրջում է աշխարհը, տեսնում է շարիքը, անարդարությունը, կռվում է տիրողների դեմ և պատժվում: Ուրիշ վարիանտով նա ասաց, որ Մհերը դուրս պիտի գա և հայի աշխարհն ազատե»¹:

«Սասմա Մհեր» վիպերգի համար, բացի «Սասունցի Դավիթ» էպոսի վարիանտներից, հեղինակը, ըստ պահանջման հարկի, օգտագործել է նաև ավանդական հայ բանահյուսության և ուրիշ ժողովուրդների էպոսների ու ֆոլկլորի առանձին մոտիվներն ու արտահայտչական միջոցները:

Վիպերգի վերլուծմանն անցնելուց առաջ, նախ տեսնենք, թե ինչպես է ըմբռնել Իսահակյանը Մհերի կերպարը, որո՞նք են նրա բնորոշ գծերն ըստ հեղինակի:

Այս առումով մեր առաջադրած հարցերին պատասխան կարելի է գտնել Իսահակյանի «Փորձ մեր էպոսի գիցաբանության մասին» ուշագրավ հոդվածի մեջ (1939 թ.)²:

¹ Այս մասին մեզ պատմել է ինքը բանաստեղծը: Նա միաժամանակ ցույց է տվել մեզ այն տետրակը, ուր գրված են մշեցի ասացողի վերոհիշյալ խոսքերը:

² Ճիշտ է, հիշյալ հոդվածը տպագրվել է ավելի ուշ, քան վիպերգը, բայց այնտեղ արտահայտված մտքերը հեղինակին զբաղեցրել են վիպերգը գրելուց տարիներ առաջ (սկսած 1902 թվականից), որոնցով և նա ղեկավարվել է իր դործն ստեղծելիս:

Խոսելով Մհերի թեոզոնիկ ծագման ու դիցարանա-
կան բնույթի մասին, Իսահակյանը նշում է, որ «Մհե-
րը Միհր աստվածն է. Մհերը կրակն է, կայծակն է,
ամպրոպն է. Մհերը արևն է»։ Ըստ նրա հայացքի՝ «մեր
վեպի մեջ ժողովուրդը իր հին աստված Մհերին՝ Միհրի
փոխնակին, դարձրեց Սասունի հերոսական ծռերից մե-
կը, բայց ամենաողբերգականը և ամենավսեմը, հան-
դես բերեց նրան միջին դարերի պատմության իրադար-
ձությունների մեջ, տալով նրան շարափոխված Միհրի
դիվական դժերից, բայց նաև վերապահելով միհրական
հին ազնիվ, նվիրական հատկություններից էական
տարրեր, որոնք մենք տեսնում ենք շատ ցայտուն շեշտ-
ված»¹։

Իսահակյանը գտնում է, որ հայ ժողովուրդը իր
էպոսը կառուցել է միհրական հին ոգուն հարադատ։
«էպոսի մեջ՝ Մհերը կուլում է իր երկրի թշնամիների
դեմ, որոնք հրով ու սրով, ծանր հարկերով ուղում են
ստրկացնել Հայաստանը. նա կուլում է ներքին թշնամի-
ների դեմ, ֆեոդալների, որոնք կեղեքում են աշխատա-
վոր ժողովրդին, ռամիկին»։

Նա դժբախտ, հալածված մարդ է. հայրը սպան-
վում է, մայրը ինքնասպան է լինում, հորեղբայրը զըր-
կում է նրան հայրական ժառանգությունից և վտարում
է Սասունից դուրս, նա աղքատ ու զուրկ թափառում է
երկրե-երկիր, մասնակցում է ժողովրդի ծանր աշխա-
տանքին, նա տեսնում է ամեն տեղ զրկանք, կեղեքում,

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4,
էջ 80։

անարդարություն, ոչ մի տեղ հանգիստ չի գտնում, ոչ մի տեղ «մոր և հոր նման քաղցրիկ ու սիրով մարդիկ»:

Նա տրտնջում է, բողոքում է աստծու դեմ, որովհետև վերջին հաշվով աստվածն է պատճառը, հանցավորը և միակ պատասխանատուն աշխարհի այդպիսի վատթար կառուցման համար: Եվ աստված իր հրեշտակների միջոցով հաղթում է նրան. հողը թուլանում է, փխրում նրա ոտների տակ, նրա ձիու ոտները խրվում են հողի մեջ (ինչպես պարսից հսկայի՝ Ռուստամի և ուսաց բողոտիր Սվյատագորի):

Եվ հետո իր ձիու հետ միասին բանտարկվում է «Ազոավու քարայրի մեջ»¹:

Մհերի կերպարի մեջ Իսահակյանը հատկապես ընդգծում է նրա՝ ազատություն տենչացող աշխատավոր մարդկության սիմվոլ լինելու հանգամանքը:

«Իր անմահ վեպի մեջ, — գրում է նա, — մեր ժողովուրդը դրեց իր բովանդակ հողին, անվերջանալի պայքարով և դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր փորձը աշխարհի իրերի մասին, իր դարավոր իմաստությունը, իր նվիրական իդեալները:

Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական, մեսիական կերպարը, մեր վեպը ազգային շրջանակից ելնելով, ընդունում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս:

Շահագործող, շար աշխարհը պիտի քանդվի մի

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 80—81:

անգամ ու վերակառուցվի մարդկության երջանկության համար:

Մհերի մեջ սիմվոլացած է տառապող և ազատություն տենչող աշխատավոր մարդկությունը»¹:

Գրելով «Սասմա Մհեր» վիպերգը, Իսահակյանը նպատակ է ունեցել դեղարվեստորեն վերաստեղծել ժողովրդական վիպասանների բազմաթիվ սերունդների համատեղ ջանքերով դարերի ընթացքում կերտված Մհերի «վսեմ, մարդարեական, մեսիական» կերպարը՝ իբրև «աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոսի»:

Հիմնական շեշտը դնելով սոցիալական հարցի վրա, բանաստեղծն իր հերոսին ներկայացնում է որպես զինված մի մարդարեի, որը սրով կենսագործում է աշխատավոր մարդկության դարեր շարունակ երազած ազատությունն ու արդարությունը:

Օժտված լինելով առասպելական-լեգենդար հատկություններով, Իսահակյանի Մհերը իր մեջ մարմնավորում է աշխատավոր ժողովրդի ֆիզիկական և բարոյական մեծ ուժը, սխրանքներ կատարելու նրա պոտենցիալ կարողությունները:

Բանաստեղծի աշխատանքը զնայել է մի կողմից իր տրամադրության տակ եղած բանահյուսական հարուստ նյութերի ստեղծագործական մշակման, այդ նյութերի վերափոխման, խմբագրման, կրճատման ու լրացման, և մյուս կողմից՝ ժողովրդական սկզբնաղբյուրի բովանդակությունն ու արվեստը, նրա ոճն ու

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 83:

ողին՝ սեփական արվեստի ու ոճի, իր քաղաքական-գաղափարական մտահղացումների հետ բանաստեղծորեն ներդաշնակելու ինքնատիպ ու հետաքրքիր ուղիով:

Մհերին իբրև աշխատավոր ժողովրդի ձգտումների ու ակնկալությունների համոզված արտահայտիչ և ամեն տիպի բռնության ու հարստահարության դեմ պայքարող անձնուրաց հերոս ներկայացնելու համար, Իսահակյանը բացահայտել, լրացրել ու զարգացրել է ժողովրդական վեպի մեջ այդ ուղղությամբ եղած տվյալները:

Դրդում ստանալով ժողովրդական Մհերի՝ տերտերի մշակ և Հալաբա թագավորի զինվոր լինելու վերաբերյալ էպոսի վարիանտներում եղած ակնարկներից, նա ստեղծել է մի շարք նմանօրինակ ինքնուրույն վիպական դրվագներ, ուր պոետական գունեղ ու խոսուն պատկերներով բացահայտվում են Մհերի մեջ աստիճանաբար հասունացող բողոքի ու ըմբոստացման տրամադրությունները: Այդ դրվագներից են՝ Մհերի կողմից ուրիշ ճորտերի հետ միասին Ճապաղջուրի դաշտում հարուստի արտը մշակելը, Ոստանա քաղաքի փոնապանի մոտ մշակ դառնալը, Լաթարա հողում ուեսի համար կոռ կատարելը և այլն:

Բանաստեղծը ցույց է տալիս, թե ինչպես Մհերը սեփական փորձով զգում է աշխատավոր մարդկանց տառապալից կյանքի դառնությունները և սկսում է «միտք անել աշխարհի բանը», թե ինչո՞ւ

Ռամիկ շարադատ

Չոր կուտե,

Հարուստ պարապ-մարդ
Մեզը կուտե՛ն:

Մեկնակեա ունենալով «շար աշխարհից» Մհերի հեռանալու վերաբերյալ ժողովրդական վեպում եղած համապատասխան ակնարկները, ինչպես նաև նրա խոստումը՝ վերադառնալու միայն այն ժամանակ, երբ «աշխարհը կը քանդվի ու մեկ էլ կշինվի», Իսահակյանը իր վիպերգի մեջ կատարել է լայն ընդհանրացումներ «զրկող ու շար աշխարհի» մասին, Մհերին հանդես բերելով ավելի դործոն դերում, քան նա ներկայանում է էպոսի մեջ:

Իսահակյանի Մհերը տեսնելով, որ իշխանների ու մեծատունների մառան ու մարադ, հոր ու հնձան լցնող սամիկներն ու մշակները իրենք միշտ մնում են «անոթի, մերկ ի մորեն», չի բավարարվում լոկ շար աշխարհից հեռանալով: Դառնացած ու ալեկոծված վերոհիշյալ անարդարություններից, նա անձամբ կովի է դուրս դալիս ոստանիկների ու սեպուհների, ազատների ու ավատների հոծ բանակի դեմ, և միաժամանակ կոչ է անում բախտակից մշակներին, ճորտ ու բանվորներին՝ զուրս դալու տիրող կարգերի դեմ:

— Է՛յ, դուք, մշակ, ճորտ ու բանվոր,
Կը շինեք հար դուրք ու դարբաս,
Ու ձեզ համար
Լուծ ու անուր, զնդան ամուր...

Ելնենք դուպար
Աշխարքի դեմ զրկող ու շար.

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 89:

II

Մինչև արդիս - Միջ. աշօթի - Յարս -
Հարսի ծառի ասան,
Տարածի արդի ասան,
Կասան - Կարսու ինչ իրիկի փրակ հող:

Արտան - ինչ անուն շոքր - Կարսի
Թիկն է հարսի ծառի շոքր
Կարսու ծառի մը հինցի ևս ինչի.
Կը ինչ գրի, հինցի ինչ անուն =

Մինչ ասան.
- Կարսի ծառի.
Կարսի ծառի.
աշօթի ինչ,

Ա.Վ. Իսահակյանի «Սասնա Մհեր» վիպերգի
գրվագներից մեկի ինքնագիրը (1928 թ.)

Ողջ ավերինք
 Ու սամկություն բերենք աշխարհ,
 Ռամկի օրենք ու իրավունք,
 Որ տեր դառնա սամիկն իրեն
 Սուրբ վաստակին, արդար հացին¹:

Ժողովրդական վեպի բովանդակության մեջ Իսահակյանի կատարած կարևոր փոփոխություններից է նաև Մհերի նշովման պատմությունը: Ի տարբերություն էպոսի, ուր Մհերն անիծվում է հարազատ հոր կողմից՝ իր շար ու անհնազանդ բնավորության համար, Իսահակյանի վիպերգում Մհերին նշովողը իշխաններն ու ժամերեցներն են՝ աշխարհիկ ու հոգևոր իշխանության դեմ նրա կատարած ընդվզման համար:

Նորմուծություն է և այն պատգամը, որ տալիս է Ազոավու այրում փակված Մհերը՝ Համբարձման օրն իրեն այցի եկած ծերունի հովվին: Այդ պատգամի միջոցով, որը բացակայում է էպոսի վարիանտների մեջ, Իսահակյանը ակնարկում է՝ դարերի ընթացքում ճնշված աշխատավորական մասսաների մեջ ուռճացող մոտալուտ ապստամբության տրամադրությունները:

Ծերունի հովվի այն հարցումին, թե ե՞րբ է ինքը դուրս գալու աշխարհ, Իսահակյանի Յասման Մհերը պատասխանում է.

— Երբ շեղրն հասնի
 Ոսկորին,
 Ռամիկ կանչի
 Մհերին...²:

¹ Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 95:

² Նույն տեղում, էջ 106:

էպոսի գաղափարական բովանդակութեան հարրատացման ու բյուրեղացման ուղղութեամբ Իսահակյանի կատարած ստեղծագործական մեծ աշխատանքը իր լրումն է ստանում և տրամաբանական ավարտին է հասնում վիպերգի «Վերջերգ»-ի մեջ, ուր պատմվում է այն մասին, թե ինչպես շատ դարեր հետո, անսալով ռամկի կանչին, Մհերը դուրս է գալիս քարայրից:

Շուրջ 70 տողից բաղկացած ինքնուրույն ու նոր վիպական ուշագրավ մի դրվագ է դա, որով հեռավոր դարերի խորքում ստեղծված՝ տառապող և ազատութուն տենչող աշխատավոր մարդկութունը խորհրդանշող Մհերի վսեմ, մարդարեական կերպարը, հեռվից հեռու, կապվում է մեր օրերի հետ:

Հարազատորեն պահպանելով վիպերգի ընդհանուր ոճն ու ոգին, Իսահակյանն իր այս նշանավոր «Վերջերգ»-ի մեջ պոետական մեծ շնչով և էպիկական ուժեղ պաթոսով վերարտադրել է մահու ու կենաց այն վճռական գոտեմարտը, որ մղում է աշխատավոր ժողովրդի դուխն անցած Յասաման Մհերը հին աշխարհի պատվարների դեմ և տապալելով դրանք՝ աշխարհում հաստատում է բոլորովին նոր կարգեր:

...Ու վարդեցին, թռան, եկան
 Հազար, հազար, հազար ու բյուր
 Ճորտ ու քսարուկ, բանվոր, մշակ,
 Մով կապեցին Մհերի շուրջ,
 Մով կապեցին փոթորկաշունչ.
 Գրոհ տվին բոլոր մեկտեղ՝
 Արքաներու, իշխաններու,
 Սեպուհներու, ավատներու,
 Հարուստներու վրա մեկտեղ.

Ավերեցին աշխարհը շար,
 Ու ոամկություն բերին աշխարհ,
 Ռամկի օրենք ու իրավունք,
 Որ տեր դառնա ոամիկն իրեն
 Սուրբ վաստակին, արդար հացին՝:

«Սասմա Մհեր» վիպերգը և մասնավորապես նրա «Վերջերգը» Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ու նրա անմահ առաջնորդի՝ Վ. Ի. Լենինի կատարած համաշխարհային-սպառմական աննախընթաց դերի յուրահատուկ արձագանքն է:

Երկար տարիներ «խեղճ աղքատի» ցավերով տառապող և նրա ազատագրումը տենչացող դեմոկրատ բանաստեղծը՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեջ, վերջապես, տեսավ իր վաղեմի երազանքների իրականացումը, և նրա անմիջական ուժեղ տպավորության տակ ոգևորությամբ դրեց իր լավագույն գործերից մեկը՝ «Սասմա Մհեր» վիպերգը:

«Երբ բռնկվեց Հոկտեմբերյան սոցիալիստական աշխարհացունց ռևոլյուցիան, ես տեսա, որ Մհերի ազատության ժամը հնչեց:

1919 թ., ժնևում, ես սկսեցի գրել «Սասմա Մհեր» պոեմը, որ հրատարակվեց 1922 թ. և ապա 1938 թ. մշակված լույս տեսավ Երևանում»², — գրել է ինքը բանաստեղծը:

Ժողովրդական վեպի սոցիալական բովանդակության հարստացման ու բյուրեղացման հետ միասին

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 108—109:

² Ա.Վ. Իսահակյան, Սասմա Մհերի մասին, տես «Գրական թերթ», 1939, 15 սեպտեմբերի, № 25 (240):

Իսահակյանը մշակել, կատարելագործել ու զարգացրել է նաև նրա ձևը — արվեստը:

Էպոսի հետևողությունները իր վիպերգի համար ընտրելով հիմնականում էպիկական ձևը, բանաստեղծը, հավատարիմ մնալով իր ստեղծագործական խառնվածքին, մտցրել է նրա մեջ զգալի քնարական տարր:

«Սասմա Մհերի» բազմաթիվ սքանչելի լիրիկական կտորներից, իբրև օրինակ, հիշենք Մհերի դիմումը վայրի հավքերին, որի մեջ մենք լսում ենք մարդկության համար «ազատ ու անպարտ» կյանք տենչացող հումանիստ պոետի ծանոթ ձայնը:

...Երանի՛կ ձեզ, վայրի հավքեր,
Դուք օրհնած եք, մարդն անիծած,
Ազատ, անպարտ,
Ընկերներով ու ախպոր պես
Կապրիք անհոգ ու սեր կաներ.
Ո՛չ արտատեր կը ճանչնաք,
Ո՛չ հարկ ու կոռ, ո՛չ թագավոր,
Երանի՛կ ձեզ, վայրի հավքեր...¹

Իր վիպերգի մեջ Իսահակյանը ստեղծել է մի շարք ինքնուրույն բանաստեղծական դեղեցիկ պատկերներ: Օրինակ՝ Սասմա լեռներից վար սուրացող աղբյուրների դինամիկ ու սեղմ նկարագիրը, որն իսկական էպիկական պատկերի մի սքանչելի նմուշ է.

Սասմա դար-դուրան՝ աղբյուր հազարան,
Նման սուրացող սեղ առյուծներու՝
Բաշերն արծաթի՝ փռած քերծերուն²:

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 94:

² Նույն տեղում, էջ 84:

Կամ՝ Մհերի բնավորությունը բացահայտող հե-
տևյալ սակավաբան, բայց շատ խոստուն նկարագիրը.

Վես էր բնութքը, խրոխտ ու ըմբոստ,
Հրով, խանդով վառ.
Զայրույթի պահին՝ մթար ու մլար,
Հանց որ նեմրութ սար¹:

Նման տիպի ինքնուրույն ու ինքնատիպ պատկեր-
ների հետ միասին, Իսահակյանի վիպերգի մեջ նոր ու
թարմ կիրառմամբ հանդես են գալիս նաև այնպիսի
պատկերներ ու համեմատություններ, որոնց մտածո-
ղության եղանակը, ոճն ու ստեղծագործական ատաղձը
հիշեցնում են հայ ժողովրդական հեքիաթներում ու եր-
գերում հանդիպող բանաստեղծական պատկերները:

Օրինակ՝ Թագավորի հարկը պահանջող ռեսի դեմ
Մհերի ընդվզման նկարագիրը, ուր նա համեմատվում է
անառիկ բերդի հետ.

Մեկդի՛ քաշվեք, մեկդի՛ հիմի,
Ճամփա՛ տվեք, թող ռեսը գա,
Թագավորի հարկը տանի...
Ասավ Մհեր,
Ու անառիկ բերդի նման
Կանգնավ մնաց²:

Եվ կամ՝ Մհերի կողմից պատուհասված ռեսի դին
տեսած և խուճապահար եղած գյուղական ամբոխի
պատկերը, ուր մարդիկ համեմատվում են քամու բերանն
ընկած շոր տերևների հետ.

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2,
էջ 83:

² Նույն տեղում, էջ 92—93:

Գեղ-գեղովի էս որ տեսան,
Գումար փախան, եղան ցրիվ,
Հանց շոր խռիվ քամու բերան,
Մերայ ու ծործոր շունչերն ասան¹:

Հիմնականում նոր և ինքնուրույն սրակ ունի «Սասմա Մհեր» վիպերգի տաղաչափությունն ու հանգամանորումը:

Մեծ վարպետությամբ օգտագործելով հայ վիպական բանահյուսության մեջ դարերի ընթացքում մշակված ու կատարելագործված հարուստ ու բազմադաս տաղաչափական ձևերն ու հանգամանորման եղանակները (երկար ու կարճ հանգամանոր տողերով յամբական պարզոտնյա ազատ ոտանավոր անապեստի խառնուրդով և անապեստյան ազատ ոտանավոր յամբի խառնուրդով), Իսահակյանը հարստացրել ու ճոխացրել է դրանք նոր կիրառումներով, դրական շափերի ու հանդերի հետ կատարած հետաքրքիր ու ինքնատիպ խաչավորումներով:

Վիպերգն աչքի է ընկնում իր ուրույն տողատուով՝ կիսված, տրոհված ու մասնատված նախադասություններ— մեջընդմեջ հանգամանորված քառատողերով ու նույնահանգ զուգատողերով, առանձին բառերի կրկնություններով և միջանկյալ խոսքերով:

Այդ բոլորը մեծապես նպաստում են գրվածքի բովանդակության առավել հեշտ ու լավ ընկալմանը, հաջողությամբ բացահայտում ու ընդգծում են նրա գաղափարական միտվածությունը, դինամիկա ու թափ են հաղորդում վիպական գործողություններին:

¹ Ա. վ. Ի ս ս հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 93:

Բնորոշ օրինակ է այս տեսակետից հետևյալ դրվագը, ուր պատմվում է այն մասին, թե ինչպես Մհերը շինականի արտան ու վարը հեղեղումից փրկելու համար՝ մի վիթխարի ապառաժով երկու ճյուղի է բաժանում Արածանի գետը:

Ազնանց Մհեր լախտն առավ ձեռ
 Վաղեց իջավ Տարոնա դաշտ.
 Տարոնա դաշտ մեծ գետ ունի,
 Խոր ու բլրոր,
 Ու անունն է Արածանի.

Հարյուր քառսուն վտակ ու վետ,
 Կը խառնվեն իրարու հետ
 Ու կը հյուսեն Տարոնա գետ:
 Տեսավ Մհեր՝ ջուրն է հորդել,
 Վարար-վարար,
 Ու կ'ավերե գեղ ու հանդեր,
 Արտա ու վար
 Շինականին ու ռամիկին:
 Խղճաց Մհեր, մրմուռ սրտով
 Վարդեց հասավ Քարբե սարին,
 Մեկ ապառաժ վեճ վիթխարի
 Փեռ քարերեն Քարբե սարի
 Մղեց, բերեց

Գլո՛ր-գլո՛ր,

Դղո՛ր-դղո՛ր

Բերեց ձգեց էն գետի մեջ.
 Գետը բաժնեց երկու ճյուղի,
 Մեկն աջ գնաց ու մեկը՝ ձախ:
 Զուրերն իջան,
 Առաջվա պես արևերես
 Ելան գեղերն ու հանդաստան
 Շինականին ու ռամիկին՝

«Սասմա Մհեր» վիպերգն ունի շատ ինքնատիպ ու արտահայտիչ լեզու և ոճ:

Նպատակ ունենալով լեզվի ու ոճի միջոցով վերականգնապես էպոսի ստեղծման դարաշրջանը՝ միջնադարյան Հայաստանի կոլորիտն ու շունչը, Իսահակյանը խորը իմացությամբ և մեծագույն ճաշակով ու վարպետությամբ օգտագործել է հայոց լեզվի հարստությունները:

Վիպերգի լեզուն բաղկացած է գրական լեզվի, ժողովրդական բարբառների (հատկապես «կ» ճյուղին պատկանող), միջին հայերենի ու դրաբարի տարրերից: Նրա մեջ կարևոր շերտ են կազմում էպոսի վարիանտների և ընդհանրապես հայ ժողովրդական բանահյուսության բանաստեղծական լեզվից սերող՝ իմաստալից, պատկերավոր ու խոսուն էպիտետները, իդիոմները, ոճերն ու դարձվածքները:

Լեզվական նրբին զգացողությամբ և բանաստեղծական բնատուր ինտուիցիայով Իսահակյանը կարողացել է օրգանապես ձուլել իրար հետ լեզվա-ոճական վերոհիշյալ տարրերը՝ ստեղծելով մի գեղեցիկ մոզաիկա, որը, չնայած գրական լեզվից կատարված շեղումներին, իր գեղարվեստական ամբողջության մեջ հասնում է ընթերցողին և էմոցիոնալ մեծ ուժով վարակում նրան:

Ավ. Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգը հայ ժողովրդական էպոսի ստեղծագործական մշակման լավագույն և ամենաինքնատիպ օրինակներից է: Նրա մեջ գեղարվեստական խոսքի մեծ ուժով վերարտադրված է հայ ժողովրդի մղած դարավոր կռիվը իր ներքին տերերի դեմ, նրա սոցիալ-դասակարգային պայքարի հերոսապատումը:

5.

Ժողովրդական բանահյուսության հետ կապված իր ստեղծագործությունների մեջ, Ավ. Իսահակյանը, քրննարկված հիմնական թեմաներից բացի, արժարժեղ է նաև մի շարք ուրիշ կարևոր թեմաներ ու հարցեր, որոնք վերաբերում են մարդկային-հասարակական կյանքի տարրեր ու բազմազան բնագավառներին: Այսպես.

«Մի հարցում» (1922 թ.) առակում կծու հեղնանքի է ենթարկվում քահանայի խոսած քարոզը՝ աստծու բարեգթության ու առատաձեռնության վերաբերյալ, քանի որ այն իրականացվում է «կեր գնացող էակների» հաշվին¹:

«Կյանքից բանկ բանը» (1923 թ.) առակում վիրավոր վայրի աղավնու օրինակով ցույց է տրվում, որ մարդու համար աշխարհի երեսին ամենաթանկ բանը ազատությունն է, առանց որի կյանքը կորցնում է իր իմաստը:

Աղավնին գերադասում է ավելի շուտ տալ իր կյանքը, քան զրկվել թևերից, որովհետև՝ «առանց թռիչքի կյանքը դին շունի»²:

«Արջն ու օձը» (1927 թ.) առակում՝ արջի կողմից շարաշար պատժված օձի օրինակով՝ դատապարտվում է կեղծիքի վրա հիմնված ընկերակցությունը:

Օձի հետ իր դատաստանը տեսնելուց առաջ, արջը դառնալով նրան ասում է.

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 168:

² Նույն տեղում, էջ 171:

— Ես ծուռ ու մուռ գնացողին,
Ընկեր լինել թե կաթնախայեր,
Չէ, չեմ սիրում, ես չեմ ուզում:

Եվ ապա՝ թաթը ուժգին սեղմելով օձի գլխին, նրա անկենդան դին հանձնում է «մոտիկ հոսող գետին»¹:

«Ով է ապրում» (1931 թ.) ավանդույթյան միջոցով քարոզվում է ալտրուիզմի դադափարը, ըստ որի՝ «Բաջույթուն, խելք, հարստույթուն անարժեք են, երբ շի դործվում ուրիշի համար... կյանքի իմաստը ուրիշի համար ապրելու մեջն է»²:

«Արթիլան և իր սուրը» (1932 թ.) առասպելում բարբարոսների առաջնորդ Աթթիլայի դործած անասելի նախաճիրների և իրեն իսկ՝ Աթթիլայի սեփական սրով սպանվելու պատմության միջոցով ակնարկվում են աշխարհի ժողովուրդների արյան ծարավով բռնկված ժամանակակից աթթիլաները, որոնց, վաղ թե ուշ, սպասում է իրենց հեռավոր նախնու անփառունակ վախճանը»³:

«Թագավորից փախչողը» (1935 թ.) առակում մերկացվում են հարստահարիչ ու բռնակալ ինքնիշխան միապետները, որոնցից ոչ մի լավ բան չի սպասվում ժողովրդի համար⁴:

Անհրաժեշտ է հատկապես կանգ առնել Իսահակյանի «Վարադն ու աղվեսը» ուշագրտով առակի վրա, որի

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 173:

² Նույն տեղում, հատ. 3, էջ 245:

³ Նույն տեղում, էջ 148:

⁴ Նույն տեղում, էջ 182—183:

հիմքում ընկած է պատերազմի ու խաղաղության հարցը:

«Վարազն ու աղվեսը» (1922 թ.) առակի համար Իսահակյանին նյութ է ծառայել Վարդան Այգեկցու անունով մեզ հասած ժողովրդական առակներից մեկը, որը տպագրված է Ն. Մառի հրատարակած հայտնի ժողովածուի մեջ: Բանաստեղծի գրչի տակ՝ Այգեկցու մշակմամբ կրոնական երանգավորում ստացած ժողովրդական առակը դարձել է գաղափարապես ակտուալ ու առողջ, կենդանի ու գունեղ մի ստեղծագործություն:

Օգտագործելով Այգեկցու մշակած առակի սյուժեն, Իսահակյանը յուրովի վերաստեղծել է այն: Նա բացահայտել է գործող անձ կենդանիների՝ վարազի ու աղվեսի բնորոշ առանձնահատկությունները, զգալիորեն, ընդլայնելով նրանց միջև տեղի ունեցող դիալոգը և իր կողմից ավելացնելով նոր դրվագներ:

Այգեկցին վարազի մասին ասում է, թե

«Վարազն սրէր զատամունս իւր մեծաւ աշխատութեամբ և ջանիս»¹:

Իսահակյանը նույն միտքը արտահայտել է այսպիսի պատկերով.

Վարազը ժեռուտ քարերի վրա

Անխոնջ եռանդով

Սըրում էր մեկ-մեկ ժանիքներն իրա²:

Այգեկցու մոտ աղվեսը դիմում է վարազին հետևյալ կարճ ու շոր հարցումով.

¹ Ն. Մ ա ռ, ժողովածոյք առակաց Վարդանայ, 11, էջ 76:

² Ա Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2,

«Ընդէ՞ր աշխատիս. զի առ ժամս ոչ կայ կասկած կռուոյ և պատերազմի»¹:

Իսահակյանը աղվեսի այդ հարցը համապատասխան շափով ընդարձակելով, դարձրել է այսպիսի կենդանի խոսք.

Հեղնող ժպիտով
Աղվեսը նրան հարց արավ, ասաց.
«Ո՞վ կտրի՞ճ եղբայր,
Ո՞չ կույի լուր կա, և ո՞չ էլ կասկած,
Ի՞նչ ես վայրապար
Մով-քրտինք մտել ու բեղ շարշարում»²:

Նույն կարգի կերպարանափոխություն է կրել Իսահակյանի գրչի տակ նաև վարազի պատասխանը:

Այգեկցու մոտ վարազն ասում է.

«...Կռեա դու գարշելի աղուէսուկ. զի դու շես հմուտ պատերազմի, և արդ ո՞չ կարէ յանժամն պարապիլ և զէն սրել. զէն յանժամն սրել պիտի, որ պարապ է»:

Իսահակյանի մոտ վարազն ասում է.

— «Ամբողջ աշխարհում
Խորամանկ, խելոք
Հանել ես համբավ,
Բայց խելքըդ, իրոք,
Հավնոցից հեռու շի անցնում բնավ:
Զինվորը պիտի
Խաղաղութան մեջ և ո՞չ թե մարտի
Զենքերը սրե, և պատրաստ ու կազմ՝
Աշալուրջ լինի»³:

¹ Ն. Մ ա ո, Ժողովածոյք առակաց Վարդանայ, 11, էջ 70:

² Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 169:

³ Նույն տեղում:

Նշանակալից է գաղափարական իմաստի այն փոփոխութիւնը, որ մտցրել է բանաստեղծը իր մշակած առակի եզրակացութիւն-վերջավորութիւն մեջ:

Այգեկցու մոտ առակը ավարտվում է հետևյալ կրօնա-բարոյական «խրատով»:

«Յուցանէ առակս, թե յայս կեանքս պարտ է ջանալ և զղջանալ և ապաշխարել զմեղս. զի յաւուր դատաստանին ոչ կայ հնար ներելոյ և կամ ողորմելոյ, որպէս ցուցանէ մեծատուն և ի յիմար կուսանքն»¹:

Իսահակյանի գրչի տակ հիշյալ «խրատը» փոխարինվել է այժմեական, իմաստուն ու կարևոր մի ընդհանրացմամբ այն մասին, որ կայուն ու տևական խաղաղութիւն համար անհրաժեշտ է միշտ զինված ու պատրաստ լինել.

«Գիտցի՛ր, որ ժանգն է ծնել պատերազմ.
Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի
Թշնամին նվազ ախորժակ ունի»²:

¹ Ն. Մ ա ո, Ժողովածոյք առակաց Վարդանայ, II, էջ 76:

² Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի Ժողովածու, հատ. 2, էջ 169:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ
ՄԻՋՈՅՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այլ Իսահակյանի ստեղծագործության կապը ժողովրդական բանահյուսության հետ չի սահմանափակվում միայն բանահյուսական նյութերի գրական մշակումներով, փոխադրություն-թարգմանություններով, և ոչ էլ այդ նյութերի դրդումով գրված ինքնուրույն գործերով: Ոչ պակաս նշանակալից հանդամանք է բանաստեղծի մոտ նաև ժողովրդական բանահյուսության արտահայտչական միջոցների բեղմնավոր օգտագործման փաստը, որն առանձնապես ցայտուն է դրսևորված նրա լիրիկական սքանչելի ստեղծագործություններում, և որի շնորհիվ նրա պոեզիան աչքի է ընկնում իր անմիջականությամբ, վարակիչ մեծ ուժով ու խորությամբ: Ինքը Իսահակյանը տարբեր առիթներով ուղղակի կամ անուղղակի ձևով նշել ու ակնարկել է վերոհիշյալ հանդամանքի մասին:

Բնորոշ են այս տեսակետից պոետի կողմից իր բանաստեղծությունների առանձին ցիկլերին տրված հետևյալ վերնագրերը. «Այագյազի մանիններ», «Ժողովրդական մոտիվներ», «Դատարկյուն աշուղի խաղերից ու

բայաթիներից», որ մենք գտնում ենք 1897 թ. լույս տեսած նրա «Երգեր ու վերքեր» ժողովածուի մեջ:

Ուշագրավ է նաև Իսահակյանի մի խոստովանությունը արված 1916 թ.: Պատասխանելով Յու. Վեսելովսկու գրական անկետային, նա գրում է.

«Այնքան, որքան իմ ստեղծագործության մեծ մասը պատկանում է ժողովրդական մոտիվների կարգին, ապա ինձ վրա ամենից շատ ազդել են հայ ժողովրդական երգերը, ապա և արևելյան այլ ժողովուրդներինը, ինչպես և մալաոուսականը»¹:

1.

Պետք է, առաջին հերթին, նշել ժողովրդի լեզվի, մասնավորապես ժողովրդական բանահյուսության բանաստեղծական լեզվի բարերար ազդեցությունը Իսահակյանի լեզվի վրա: Լեզուն կամ խոսքը ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ դարերի ընթացքում ենթարկվելով մշակման, հասել է մեծ կատարելության:

Ժողովրդական առասպելներն ու հեքիաթները, վեպերն ու երգերը, առածներն ու ասացվածքները, ողողված են անթիվ ու անհամար հրաշալի բառերով ու ոճերով, կոլորիտային դարձվածքներով ու գունեղ էպիտետներով, ժողովրդի հոգուն հարազատ՝ կենդանի, հակիրճ ու դիպուկ արտահայտություններով: Նրանց մեջ կարելի է գտնել խոսքի պարզության ու սեղմության բացառիկ նմուշներ, երբ երկու-երեք բառով ստեղծվում են ամբողջական կերպարներ ու պատկերներ:

¹ Юр. Веселовский, Русское влияние в современной армянской литературе, 1909, стр. 25.

Պակաս նշակալից չէ նաև ժողովրդի բանաստեղծական լեզվի ինտոնացիոն ու սիմֆոնի բարձր հատկությունը, մեծ երաժշտայնությամբ օժտված հնչյունաշարը, որն հատկապես ցայտուն է ժողովրդական լիրիկայի մեջ:

Հիանալի ընկալելով ժողովրդի լեզվի հիշյալ հատկությունները, Իսահակյանը համարձակ ու անարդել քայլ է արել նրա առաջ իր ստեղծագործության դռները:

Իսահակյանի բանաստեղծությունների մեջ լայնորեն առկա են՝

Բուն ժողովրդական ոճեր ու արտահայտություններ (իդիոմներ), որոնք ուժեղ պատկերավորություն և դրամատիկ թափ են հաղորդում բանաստեղծի հույզերին ու մտորումներին: Օրինակ.

Օխար սաբով հեռո՞ւ քեզնից.

Քու շրվաֆով ապրում եմ, յա՛ր:

Օխար տաբով բաժան քեզնից,

Քու կաբոտով էրվում եմ, յար...¹:

Ժողովրդական մակդիրներն ու ածականները (հաճախ կայուն էպիտետի բնույթ ունեցող), որոնց շնորհիվ բանաստեղծությունը ստանում է հուզական նուրբ երանգ ու ջերմություն: Օրինակ.

Հայրենիքես հեռացել եմ,

Խեղճ պանդուխտ եմ, տուն չունի՛ս,

Ազիզ մորես բաժանվել եմ,

Տխուր-տրբաբում, բուն չունիմ:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 14:

Սարեն կուգաք, նխշուն հավքե՛ր,
 Ա՛խ, իմ մորրս տեսել չե՛ք.
 Մովեն կուգաք, մարմանդ հովե՛ր,
 Ախրը բարև բերել չե՛ք...¹

Խոսակցական լեզվի մեջ սովորական հարադիր բարդությունները, որոնք ընդգծում ու սրում են բանաստեղծության սոցիալական-գաղափարական բովանդակությունը: Օրինակ.

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ-ցավ.
 Օր ու արև չը տեսանք.
 Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ,
 Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
 Աշխարհի ճոխ սեղանից
 Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,
 Մեզ փայ չը կա աշխարհից...²

Ավ. Իսահակյանի լիրիկական գործերում հաճախակի կրկնվում են (տողի սկզբում, միջում և վերջում) միևնույն բառը, դարձվածքը, ոճը և այլն, ինչպես նաև իմաստով ու հնչյունական կառուցվածքով նման բառեր, որոնք հիշեցնում են ժողովրդական բանահյուսության մեջ (էպոս, երգ, առած և այլն) հանդիպող հրնչյունային ու շարահյուսական կապակցությունների կրկնությունները:

Այդպիսի կրկնությունների շնորհիվ պոետն ընդգծում է տվյալ բառը, դարձվածքը կամ ոճը, ուշադրու-

¹ Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 33:

² Նույն տեղում, էջ 72:

թյուն հրավիրելով դրանց վրա, ուժեղացնում դրանց արտահայտչական ազդեցությունը: Այսպես.

«Դարդըս լացեք...» (1893 թ.) բանաստեղծության մեջ կրկնվում են՝ «դարդըս լացեք» (4 անգամ), «ալվան-ալվան» (2 անգամ), «կուլամ ես» (2 անգամ), «տարան» (2 անգամ), «թողեց ու գնաց» (2 անգամ):

Դա՛րդըս լացեք, սարի սրմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ.
Դա՛րդըս լացեք, բազի բլրո՛ւլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...¹

«Սիրեցի, յարըս տարան...» (1898 թ.) բանաստեղծության մեջ կրկնված են՝ «տարան» (3 անգամ), «չը կա» (3 անգամ), «էս ի՞նչ զուլում աշխարհ է» (3 անգամ), «գնացին» (2 անգամ) և այլն:

Սիրեցի, յարըս տարան,
Յարա տըվին ու տարան.
— էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սիրտս պոկեցին, տարան:

Յալքս խորն է, ճար շը կա,
Ճար կա, ճար անող շը կա.
— էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացավ բնկեր շը կա...²

Շարահյուսական կապակցությունների և հնչյունական կրկնություններով հարուստ են նաև Իսահակյանի՝ «Մաճկալ ես, բեզարած ես...» (1893 թ.),

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 35:

² Նույն տեղում, էջ 71:

Զոգաբանական (հայերեն) 1893:

I

աճառի^{*)}

Պարոտս լայնի՛, սարի՛ ստիւնը՝

Ալ-ա՛ն-ալ-ա՛ն ճարտի՛վի՛,

Պարոտս լայնի՛, Բարդի՛ Բե՛րնը՝

Անկշառ ծովնայ, զով հովիտի՛:

Երբի՛, Գրիբի՛ զընթաց Տիւննը՝,

Իննճար - հոնճար՝ խալած Բի՛,

Եսրիս ցարանը, զա՛նիս ցարանը՝

Անարան՛ն, անարի՛ խալած Բի՛.

Անի՛, Բարս Բնի՛ն հաննից Տրի՛նը՝,

Անճար Բարդից ու զ՛նայ.

Արարիս սաւ զԵնթարան՝ ի խալածի՛²⁾

Անճիւր Բարդից ու զ՛նայ....

Պարոտս լայնի՛, սարի՛ ստիւնը՝

Ալ-ա՛ն-ալ-ա՛ն ճարտի՛վի՛,

Պարոտս լայնի՛, Բարդի՛ Բե՛րնը՝

Անկշառ ծովնայ, զով հովիտի՛:

1893թ. 29 Օգոստի

Վիլնա.

*) աճառի Զոգաբանական բառերի մեծագույն լեզու-
բանական ուղղակիությունը: 1) խոս. ճարտ. 2) հիմնական. 3) զաւսել.

4) Վիլնա:

«Է՛յ, ջան-հայրենիք...» (1900 թ.), «Արադին» (1901 թ.), «Է՛յ կանաչ ախպեր...» (1902 թ.), «Բինդյուլ» (1941 թ.) հայտնի բանաստեղծությունները, և մի շարք ուրիշներ:

ԱՎ. ԻՍԱԿԱԿՅԱՆԻ կողմից նրա լիրիկական և էպիկական, արձակ և շափածո գործերում բանաստեղծական նուրբ զգացողություններ ու վարպետություններ օգտագործված ժողովրդական դարձվածքներից, ձևերից, պատկերավոր արտահայտություններից ու իդիոմներից են նաև հետևյալները:

Աչքը ճամփին ծով կտրել, օր ու արև սևցնել (Ա, 14), շքնկշքնկալով փշող հով, փերուզ երկինք (Ա, 27), ծով կարոտ (Ա, 30), սլոր-մոլոր ճամփա (Ա, 32), պապակ սիրտ, անուշ լեզու (Ա, 33), ալվան-ալվան ծաղիկներ, ամպշող երկինք, հոնգուր-հոնգուր լաց, սարի սմբուլ (Ա, 35), զուլալ աղբյուր, ծուփ-ծուփ ծաղկունք (Ա, 39), անդին մերիկ, պղտոր երկինք, սև սիրտ, ազիզ բալա (Ա, 40), ցուուն աստղեր (Ա, 50), ծով-ցավեր, մուշ-մուշ քուն (Ա, 54), ալ վարդ, մատազ սիրտ, կարմիր-կանաչ օրեր (Ա, 55), անտակ ծով, խաս հավքեր (Ա, 57), սև աչեր, անձեր դիշեր, արուն-ծով սիրտ (Ա, 58), ցավ ու ցեց, վառ-վառման կրակ (Ա, 59), սև ճամփա, կարոտ սիրտ (Ա, 62), արև-երես ելնել, (Ա, 63), պաղ-պաղ փշող քամի (Ա, 56), խաս բաղ (Ա, 67), սև-մութ ամպեր, զառ փշեր, խաս-փետուրներ, արուն լալ (Ա, 68), դարդոտ սիրտ (Ա, 70), զուլում աշխարհ (Ա, 71), դառը դատել, դատարկ նստել, քար աշխարհ (Ա, 72), մոլոր միտք, խոլոր սիրտ (Ա, 77), վառ արև, դալար կյանք (Ա, 80), զառ զարունք, կանաչ-կարմիր երազներ, փուշ աշխարհ (Ա, 83), անկուշտ հող (Ա, 88), աղի-ծով արցունք, քարե-քար

(Ա, 99), ծովն ընկած մարդու նման՝ նամարդ օձից կախ
 ընկնել, արունքտեր աշխարհ, զառ աստղեր (Ա, 104),
 երազ աշխարհ (Ա, 105), զուլում բախտ, դիվան կան-
 շել, մի բուռ հողով բերանը ծեփել (Ա, 110), ժեռ քար,
 դարդի սար (Ա, 111), ծարավ սիրտ (Ա, 113), զլխին
 փաթ տալ, ելման ջրեր (Ա, 114), ջավահիր սարեր, ազիզ
 Արազ (Ա, 119), սեվասիրտ ագռավ, ծաղիկ սիրտ, ջի-
 վան մեռել (Ա, 123), վիշապ քամի, բարկ արև (Ա, 125),
 աշնան հավքեր (Ա, 126), ծով-քրտինք (Ա, 129), քար-
 սրտեր (Ա, 133), կարմիր-կանաչ կապել (Ա, 136), լա-
 լազար գարուն, քար արցունք (Ա, 137), բանձրիկ սարեր
 (Ա, 141), քուն-դադար, արուն-արցունք (Ա, 150), դեղ-
 դարման (Ա, 152), արբեշումե մազեր, անմարելի բով,
 շահին-շահի թախտ, անմահական դեղ, Հնդրստանու
 ծով (Ա, 187), ծաղիկ-սարեր, զանգակ-աղբյուրներ (Ա,
 188), սար ու քար ընկած, շարը տանել, մեկուճար բա-
 լա, նրխշուն լալ, սար ու ձոր արուն կապել, սև սարեր
 (Ա, 191), օրոր ու շորոր, վառման կարոտ (Ա, 195),
 կարմիր-կանաչ գարուն (Ա, 202), գարնան կանաչ
 դռներ, պաղ-պաղ ջրեր (Ա, 304), հագնել-կապել (Ա,
 305), բերք ու բարիք (Բ, 7), կռած-կոփած (Բ, 9), ամպ-
 հով գիշեր, կարոտ աչք, արար-աշխարհ (Բ, 13), սի-
 նամ-հավք (Բ, 14), հարհանդ-մարմանդ (Բ, 17), զառ
 Մանթաշ (Բ, 18), ալ-վարդ, անսեր սիրտ (Բ, 19), արք
 ու հարգ (Բ, 20), աղբրա-ակ, ծով աչքեր, ծավի աչեր
 (Բ, 21), ելնել-կանգնել (Բ, 25), սուսան սար, եղնիկ
 Ջարո, քար ու քռա (Բ, 26), հրաշք-աղջիկ (Բ, 29), դար
 ու դարափ (Բ, 32), լույս-աշխարհ, սեղ ու արոտ, թել-
 թել անել (Բ, 33), համով-հոտով (Բ, 39), էրված սիրտ,
 կանանչ-կտրիճ, զմրուխտ-թռչուն (Բ, 44), խաս բլբուլ,

զուլալ առու, բարակ հով (Բ, 45), քարի փերթ սիրտ (Բ, 46), կուց-կուց արուն, արուն լալ (Բ, 52), ցավ ու ցեց ընկել (Բ, 59), ծեղր առնել (Բ, 57), առավոտ-լուսին, հացով ու թացով (Բ, 83), դար-դուրան, հանդ ու հան-դաստան (Բ, 84), դառ ու դադրած, գեջ ու խավար (Բ, 88), պահող-շահող, շարան-շարան, հավք ու թռչուն, բեռով-թեռով (Բ, 91), գեղ-գեղովի (Բ, 92), տաղով-խաղով (Բ, 93), դուրք ու դարբաս (Բ, 95), արևերես ելնել (Բ, 97), ծով-ծիրանի, տոն-կիրակի (Բ, 99), քար քաղել, ավազ մաղել (Բ, 103), արև-աշխարհ (Բ, 105), կապել-բանդել (Բ, 105), բարկ ու կրակ (Բ, 107), սուրբ վաստակ, արդար հաց (Բ, 109), հավ ու ճիւղ, դուռ ու երդիք, յոթ որդով սեղան նստել, կարոտ մնալ թաց աչքի (Բ, 113), կսկուծ-կսկուծ պագ, վախից թև առած սիրտ, գետինը պատռվել կուլ տալ (Բ, 114), դարդը սըրտին, բարով արժանանալ ազիզ տեսքին (Բ, 115), շնչի վրա նստել, աշխարհում ձենել, օր չը տալ, ճարը կտրած (Բ, 117), ոտքը քարին գալ (Բ, 118), սեր տալ ու սեր առնել, սրտի սիրական (Բ, 119), յոթն օր, յոթ դիշեր բոլորել, ձեռքը ծոցին մնալ (Բ, 120), կարոտ-ծարավ սիրտ, պաշ տալ ու պաշ առնել (Բ, 122), սիրտը ձենի, թև առնել թռչել (Բ, 131), հնութ ժամանակ (Բ, 141), սար ու քար ընկնել (Բ, 142), դուման դաշտ, հյուրի-փերի (Բ, 152), հոգին բերանին (Բ, 166), ծով-բրտինք (Բ, 169), արևկողի թիկն տալ (Բ, 176), շիփ շիտակ (Բ, 173), գլուխը քարին դարկել (Բ, 176), կեծ-կրակ (Բ, 178), շարվե-շարան (Բ, 179), աչք քցել (Գ, 53) և այլն¹:

¹ Փակագծերում նշված տառերն ու թվերը ցույց են տալիս Իսահակյանի երկերի ժողովածուի համապատասխան հատորներն ու էջերը:

Իսահակյանի լեզվի ուժն ու հմայքը նրա ժողովրդաշնության մեջ է: Ժողովրդի կենդանի խոսքից և ժողովրդական բանահյուսության բանաստեղծական լեզվից եկող լեզվա-արտահայտչական ձևերի ճաշակավոր, հմուտ և բարձր մակարդակի օգտագործմամբ բանաստեղծը մեծապես ուժեղացրել է իր պոետական խոսքի հուզականությունն ու պատկերավորությունը, առարկայական կոնկրետությունն ու անմիջականությունն է հաղորդել նրան, կենդանի ու ռեալիստական ձևով ներկայացրել է ժողովրդի կյանքն արտացոլող իր գրվածքների գործող անձանց միջավայրը, կենցաղն ու բարքերը:

Ավ. Իսահակյանի շնորհիվ մեր գրական լեզուն հարստացել է ժողովրդական թարմ, պարզ, պատկերավոր ու խոսուն բազմաթիվ բառերով, ոճերով ու արտահայտություններով:

Հավատարիմ մնալով ժողովրդական լեզվի նկատմամբ ունեցած իր գրական վերաբերմունքին, Իսահակյանը տարիների ընթացքում վերամշակել է իր ստեղծագործությունները և ձգտել հստակել ու բյուրեղացնել իր լեզուն ու ոճը, ավելի մոտեցնել այն համաժողովրդական-գրական լեզվին:

Օրինակ. 1893 թ. գրված «Մաճկալ ես, բեզարած ես...» բանաստեղծության մեջ օգտագործված ֆաշեր, դրեր, ֆցեր, դշից բարբառային ձևերն ու օտար բառերը հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ ֆաշել, դրել, ֆրցել, ծրտից¹:

¹ Այս և հաջորդ օրինակները քաղել ենք Ավ. Իսահակյանի Երկերի ժողովածուի Ա հատորին (1950 թ., Երևան) կցված «Ծանոթագրություններ» բաժնի տեքստային տարբերություններից, որ պատրաստել է Ա. Ինձիկյանը:

1897 թ. գրված «Աշնան պղտո՛ր, պղտո՛ր ամպեն» բանաստեղծության մեջ օգտագործված՝ կուգա, յարար, դարդու, ազիզ օտար բառերն ու բարբառային ձևերը, հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ կը գա, միքե, վշտոտ, անգին:

1899 թ. գրված «Արևելքից մի հավք եկավ» բանաստեղծության մեջ օգտագործված խաս հավմ, նխշուն, ձեն և սրկավ բարբառային ձևերը, հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ մի հավ, հակինք, ձայն, մխրնվեց:

1902 թ. գրված «Ծամերդ հյուսել...» բանաստեղծության մեջ օգտագործված կայներ, զուլում, դարբեդար օտար բառերն ու բարբառային ձևերը, հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ կանգնել, դժգոհ, դարդամահ:

1905 թ. գրված «Քնքուշ տատրակս, դու անծանոթի...» բանաստեղծության մեջ օգտագործված՝ քեզի, մոռցար, վերանա, գլխուս վերա բարբառային ձևերն ու բառերը հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ քեզ, մոռացար, քափուր, գլխիս վրա:

1908 թ. գրված «Դու չես հասկանա...» բանաստեղծության մեջ օգտագործված՝ զուխերը, քոնել, տարտրդնիմ բարբառային ձևերն ու բառերը հետագա մշակումների ընթացքում դարձել են՝ զարդերը, քոչել, կորչիմ անհետ:

2.

Ժողովրդական բանահյուսությունը նշանակալից ազդեցություն է գործել Իսահակյանի բանաստեղծական արվեստի շատ ուրիշ տարրերի վրա ևս: Ինչպես լեզվի հարցում, այնպես էլ այստեղ ժողովրդական բառ ու

բանի խորը ճանաչողութիւնն ու բարձր գնահատութիւնը միանալով բանաստեղծի գեղարվեստական նուրբ զգացողութեան ու վառ երևակայութեան հետ, տվել է իր արգասավոր արդյունքները:

Իր պոետական մտքերն ու զգացմունքները առավել ցայտուն դրսևորելու նպատակով Իսահակյանը հաճախ կատարում է բնապատկերի և մարդու հոգեկան վիճակի հաշող զուգադրումներ, օգտագործելով դրա համար ժողովրդական վիպասանների ու գուսանների կողմից այդ ուղղութեամբ դարերի ընթացքում ստեղծված դրական փորձը, վիպասաններ ու գուսաններ, որոնց համար բնութիւնը եղել է ոչ միայն կյանքի աղբյուր, այլև աշխարհի ու մարդկանց, գեղեցկի ու տգեղի մասին ունեցած պատկերացումների ու ըմբռնումների հող ու զինարան:

Բնութիւնը Իսահակյանի մոտ հանդես է գալիս ոչ միայն իբրև ֆոն, այլև օգնում է տվյալ ստեղծագործութեան իդեական բովանդակութեան բացահայտմանը, շրջապատի իրականութեան գեղարվեստական-պատկերավոր արտացոլմանը: Այսպես.

«Թափվեցին տերևներն...» (1895 թ.) բանաստեղծութեան մեջ՝ հեղինակի երգերում առկա թախծի տրամադրութիւնը բացահայտվում է աշնան ծառերից թափվող տերևների պատկերով:

Թափվեցին տերևներն աշնան ծառերից՝
Թոշնա՛ծ ու դալո՛ւկ:
Թափվեցին երգերս բեկված իմ սրտից՝
տրտո՛ւմ ու թալո՛ւկ¹:

¹ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. I, էջ 48:

«Սև-մութ ամպեր...» (1898 թ.) բանաստեղծության մեջ պոետի տխրած սիրտը զուգահերձում է ամպամած Ալազյազի հետ:

Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան,
Դուման հագար, Ալազյա՛դ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման, Ալազյա՛դ...¹

Նույնը մենք գտնում ենք նաև՝ «Տոթը այրեց...» (1891 թ.), «Ցուրտ է օրը...» (1892 թ.), «Քընքուշ լուսին...» (1895) թ.), «Մութը գրկած...» (1895 թ.), «Ամպն է կախել...» (1895—1917 թթ.), «Ա՛խ, իմ ճամբես...» (1897 թ.), «Պա՛ղ-պա՛ղ փշեց...» (1897 թ.), «էս ջինջ աղբյուրն է...» (1902 թ.), «Քաղած վարդը...» (1904 թ.), «Քարձր լեռների...» (1907 թ.), «Աշո՛ւն է, քամի...» (1913 թ.) և մի շարք ուրիշ ստեղծագործությունների մեջ:

Ավ. Իսահակյանի կիրառած պատկերավորման մյուս ձևը, որն իր արմատներով կապված է ժողովրդական մտածողության ու բանարվեստի հետ, այսպես կոչված բացասող հոգեբանական զուգահեռականությունն է: Բնության և մարդկային կյանքի երևույթների մերձեցմամբ, այստեղ ոչ թե հաստատվում (ինչպես այդ ուղիղ զուգահեռականության ժամանակ է), այլ ժխտվում է այդ երևույթների նույնությունը, միաժամանակ, անուղղակի ձևով, ակնարկվում է նրանց մեջ եղած ընդհանրությունը, ստեղծվում է համապատասխան տրամադրություն: Այսպես.

¹ Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 68:

«Զարոյի երգը» (1895—1917 թթ.) բանաստեղծութեան մեջ՝ պոետը սիրած յարի նկատմամբ իր հոգում փոթորկվող մշտարթուն զգացմունքը բացահայտում է՝ այն հակադրելով գիշերվա անդորրին:

Կոպերն իշան լուռ գիշերվա,
Սարին, ձորին բերին քուն,
Դու, լույս-արև հոգուս վրա,
Դու միշտ արթուն իմ հոգում¹:

«Արտուտն ուսին...» (1895—1917 թթ.) բանաստեղծութեան մեջ նա դարնանային բնութեան դարթոնքին հակադրում է ձմռան ու գիշերվան նմանվող իր մուսյլ հոգին:

Արտուտն անուշ երգում է սեր,
Սիրտս լո՛ւռ է, քանց ձրմեռ,
էս ի՛նչ կարմիր վառ արև՝ է,
Սիրտս մո՛ւթն է, քանց գիշեր...²:

Բացասող զուգահեռականութեան բնորոշ նմուշներ են պարունակում նաև Իսահակյանի «Արևն իջավ...» (1891 թ.), «Ա՛խ, նորից եկավ...» (1903 թ.), «Առավոտուն ծով ճաճանչում...» (1905 թ.), «Գարուն եկավ...» (1908 թ.), «Հայրենի աղբյուր...» (1913 թ.) և մի շարք այլ բանաստեղծություններ:

Իսահակյանը ժողովրդական դուստանների ու երգիչների օրինակով հաճախ դիմում է համեմատությունների ձևին, օգտագործելով դրա համար՝ պես, նման և ուրիշ կապակցություններ: Այսպես.

«Ցաված սիրտս...» (1891 թ.) բանաստեղծութեան մեջ պոետն իր երգերը նմանեցնում է թռչող հավքերի.

¹ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Նրկերի ժողովածու, հատ. 2, էջ 52:

² Նույն տեղում, հատ. 1, էջ 91:

Հավերի պես երգերս թռան,
 Հովերի հետ գնացին,
 Արցունքներս ցողեր դառան,
 Վարդի ծոցում շողացին¹։

«Արևի պես...» (1895—1917 թթ.) բանաստեղծութ-
 թյան մեջ Իսահակյանը սիրած յարին համեմատում է
 շափաղ տվող արևի հետ.

Արևի պես, սիրուն Զարոս,
 Շափաղ տալով դուն կուգաս,
 էն մութ ձորին, իմ խոր սրտին,
 Ծողեր տալով դուն կուգաս...²։

Ուրիշ դեպքերում բանաստեղծը յարի աչքերը հա-
 մեմատում է հրեղեն ծովի («Քո աչերըդ...»—1895—1914
 թթ.), սլաշձառ աղբյուրի («Դու նստել ես...»— 1895—
 1917 թթ.) հետ, երգերը՝ անքուն մոր «նանիկի» («Ման-
 թաշին»—1895—1917 թթ.), իր սիրտը՝ բացված խոր
 վերքի («Լա՛ց, իմ նազելիս...»— 1908 թ.), զվարթ ար-
 տուտի («Նորից եկան...»— 1903 թ.), մուրացկանի դա-
 տարկ ամի («Գարուն եկավ...»— 1908 թ.) հետ, և այլն։

Պոետն ունի այնպիսի բանաստեղծություններ, որոնց
 յուրաքանչյուր տողը մի գեղեցիկ ու ինքնատիպ համե-
 մատություն է՝ վերցված ժողովրդի պատկերավոր մտա-
 ծողության գանձարանից։

Դրանցից մեկն է բանաստեղծի հետևյալ ներշնչ-
 շուն երգը, որը հիշեցնում է մեզ Սայաթ-Նովայի սիրեր-
 գերը.

Յա՛ր աչերըդ արեգական
 շողքով վառված ծովի նման,

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 7։

² Նույն տեղում, հատ. 2, էջ 19։

Արբեշտան մազերդ արձակ
 ծո՛ւփ-ծո՛ւփ կը տան հովի նրման,
 Վար կը նայես խղճուկ գերուդ
 պարզ երկընթի մովի նրման,
 Միրտըս կայրես քնքուշ շնչով՝
 անմարելի բովի նրման...¹

Ա.վ. Իսահակյանի ստեղծագործութեան մեջ, մասնավորապես նրա լիրիկական պոեզիայում, հաջողութեամբ օգտագործված է անձնավորման և շնչավորման բանաստեղծական ձևը, որն իր արմատներով կապված է ժողովրդական մտածողության հետ, լայնորեն արտացոլված է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում (հեքիաթ, առակ, երգ և այլն):

Կյանքի հանդեպ իր վերաբերմունքը դրսևորելու և սեփական զգացմունքներն ու մտորումները կենդանադրելու նպատակով բանաստեղծը ժողովրդական վիպասանների ու գուսանների նման անձնավորում ու շնչավորում է բնության երևույթներն ու առարկաները, մարդկային դիտակցություն, զգացմունքներ վերադրում այդ երևույթներին ու առարկաներին, դիմում նրանց որպես կենդանի էակների:

Մի տեղ, օրինակ, դառնալով աստղերին ու հովերին, Իսահակյանը նրանցից հարցնում է կորցրած յարի տեղը.

Միրո՛ւն աստղե՛ր, անուշ հովե՛ր
 Յարս ո՞ւր է՝ էս գիշեր,
 Պարզ երկնքի նըխշուն աշե՛ր
 Յարիս տեսա՞ք էս գիշեր²:

¹ Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 187:

² Նույն տեղում, էջ 91

Մի ուրիշ անգամ նա շնչավորում և ապրեցնում է գիշերվա երկինքը, աստղերն ու օվկիանոսը:

Վառ երկինքը լուռ գիշերով
 Երկրի կուրծքը համբուրեց,
 Աստղ-աշերը լցվան սիրով,
 Օվկիանոսը խոր երգեց...¹:

Նույն կերպ բանաստեղծի կողմից անձնավորված ու շնչավորված են նաև՝ լալկան ուռին («Ա՛նն գիշերիս պարտեզում», 1892 թ.), դարունը («Է՛յ կանաչ ախպեր...», 1902 թ.), արծիվը («Արծիվ սևաթույր...», 1907 թ.), քամին («Դուռըս ափ առած՝ կը ծեծե քամին», 1911 թ.), օջախի կրակն ու ջրաղացը («Երջանիկ խրճիթը», 1914 թ.), աշնան ծաղիկները («Աշնան ծաղիկներ...», 1921 թ.), դարնան արևը, մանուշակը, դեփյուտը, թիթեռը («Առաջին արցունքներ», 1940 թ.) և այլն:

Արտահայտչական տվյալ միջոցի կիրառման ցայտուն օրինակ է Իսահակյանի հռչակավոր «Աև-մութամպեր...» (1898 թ.) բանաստեղծությունը, ուր հեղինակը, դիմելով Մանթաշի նխշուն հավերթին, մարմանդ հովերին և Ալադյազ սարին, պատմում է իր մեծ վիշտը:

— Է՛յ Մանթաշի նխշուն հավերթ,
 Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
 Ձեր էդ զառ-վառ, խաս-փետուրնե,
 Կսենային, բանց գիշեր:

— Է՛յ Մանթաշի մարմանդ հովե՛ր,
 Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 63:

Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տղթի կփոխվեր:

— Հնչ վախ... կտարան իմ թևերս,
Ընկա գիրկըդ, Ալադյա՛դ.
Ա՛խ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,
Կամ, արուն լամ, Ալադյադ...¹

Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների մեջ կան ոչ քիչ թվով գեղարվեստական խոսույն սիմվոլիզմի ու մետաֆորներ, որոնք հիշեցնում են ժողովրդական համապատասխան սիմվոլիզմն ու մետաֆորները և աչքի են ընկնում իրենց գունազեղ պատկերավորությամբ:

Բնորոշ օրինակ է այս տեսակետից պոետի «Երազ տեսա...» (1894 թ.) բանաստեղծությունը, ուր երազի ժողովրդական սիմվոլիզմով բացահայտված է տվյալ ստեղծագործության լիրիկական հերոսի ապրումները.

Երազ տեսա — ձեր տան առաջ
Ձուլալ աղբյուր կը բխեր.
Ձենը մեղմիկ, քաղցրակարկաշ,
Ձորս դին ծո՛ւփ-ծո՛ւփ ծաղկունք էր:

Ձուր խմելու դուռըդ եկա,
Պապակ էի ու ծարավ,
Ձինջ աղբյուրը, մեկ էլ տեսա,
Ցամաք կտրավ, քար դառավ...²

Կամ՝ «Ա՛խ, ես սիրու...» (1901 թ.) հուզիչ երգը, ուր ժողովրդական բանահյուսությունից փոխ առնված

¹ Ա.վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 68:

² Նույն տեղում, էջ 39:

վարդի տրագիցիոն սիմվոլով ակնարկված է մերժված սիրո ծանր ողբերգությունը.

Ա՛խ, ես սիրու ճամփի ափում
Մենակ բուսած վայրի վարդ եմ.
Անց ու դարձի փոշին ծփուն
Վերաս իջած, կորած վարդ եմ:

Սիրունները պարտեղների
Քնքուշ պահած վարդն են սիրում,
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝
Սերս հասած արևներում...¹

Սիմվոլ-մետաֆորներ են պարունակում նաև պոե-տի «Ծաղիկ էի...» (1891 թ.), «Ա՛խ, ալ-վարդի...» (1897 թ.), «Մատաղ սիրաբու...» (1898 թ.), «Ազուսի-ների դորշ թևերով...» (1906 թ.), «Մահը» (1908 թ.) բա-նաստեղծությունները:

Իր լիրիկական և էպիկական շափածո գործերում (երգ, վիպերգ, լեզենդ, բալլադ) Իսահակյանը հմտու-թյամբ կիրառել է ժողովրդական բանահյուսության տաղաչափական և հանգավորման ձևերը, որոնց շնոր-հիվ ավելի շեշտուն են դարձել նրա երկերի ազգային առանձնահատկությունները, ապահովվել է այդ երկերի ձևի ու բովանդակության ներդաշնակությունը:

Այս առումով առանձնապես բնորոշ է Իսահակյանի լիրիկական պոեզիան, ուր կարելի է գտնել հայ ժողո-վրդական երգերին հատուկ տաղաչափական և հանգա-

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 113:

«Վորման տարբեր ձևերի ստեղծագործական կիրառման քաղմաթիվ հաջող օրինակներ:

Այդ օրինակներից մեկն է բանաստեղծի «Ծամերդ հյուանել...» (1902 թ.) գողարիկ սիրերգը, որը հորինված է 5-վանկանի ժողովրդական քառյակների հետևողությամբ, քառյակներ, որոնք ունեն մեջընդմեջ հանգերով, ստանց հատածի տողեր:

Իսահակյանի երգը

Ծամերդ հյուանել՝
 Կանգնել ես կալը,
 Օբբս սև արել .
 Կասկել ես ալը¹:

Ժողովրդական երգ

Չեռները խաչեր,
 Կայներ է դուռը,
 Երեսը կարմիր,
 Նման ա նուռը:

Նման կարգի մի նմուշ է Իսահակյանի «Էս ճամբեն ուրը-մուրը...» (1893 թ.) հայտնի բանաստեղծությունը, որը հորինված է ժողովրդական քառյակներին հատուկ 7-վանկանի ոտանավորի մի այնպիսի ձևով, երբ եռավանկ ոտքը դրվում է տողի սկզբում, հետևյալ սխեմայով՝ $3 + 4 = 3 + (2 + 2)$:

¹ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 124:

Իսահակյանի երգը

Էս ճամբե՛ն / ուղո՛ր-մուղո՛ր
Սե՛վ ծովի՛ / բուղո՛ր կ'երթա՛.—
Շուշան յա՛/րըս ինձ թողեր՝
Է՛ն տղի/հետ ս՛ւր կ'երթա...¹:

Ժողովրդական երգ

Է՛ս գիշե՛ր, / լուսնա՛կ գիշե՛ր,
Զո՛ւնն եկե՛լ / գետի՛ն նախշե՛ր.
Ա՛շքըդ դե՛մ/արա՛՝ պաշե՛մ,
Կե՛ս ունե՛ր, / կարմիր թըշե՛ր:

Բանահյուսական հանդու շափ ունեցող ստեղծագործություններից է Իսահակյանի «Գագաթներին մով սարերի...» (1906 թ.) բանաստեղծությունը, որը հորինված է ժողովրդական և գուսանական երգերին հատուկ այսպես կոչված քողարկված հանդերով, երբ իսկական հանգ կազմող բառերից հետո կրկնվում են նույն բառը կամ բառերը:

Իսահակյանի երգը

Գագաթներին ՄՈՎ սարերի
Թափառեցի սերըս լալով.
Լացըս քամին ԶՈՎ սարերի
Լսեց, տարավ թևին տալով...²

Ժողովրդական երգ

Իմ սերը ՄՈՒՐ ա դառել,
Կրրակ ու ջուր ա դառել.
Յա՛ր, քեզ սըրտով սիրելը
Ինձ թուր ու ՄՈՒՐ ա դառել:

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 32:

² Նույն տեղում, էջ 193:

Նույն տիպի գործեր են նաև՝ «Յարրս նստել վանքի դրոան...» (1897 թ.), «Սիրո՛ւն աղջիկ, երկիր լինիմ..» (1898 թ.), «Դու նըխշուն նուռ դառը վրադ...» (1899 թ.), «Ա՛խ, վաթան ջան, մնալով...» (1900 թ.), «Շափա՛ղ կուտաս բաղի միջին...» (1907 թ.), «Բինգյոլ» (1941 թ.) բանաստեղծությունները և մի շարք ուրիշ ստեղծագործություններ:

3.

Տարիների ընթացքում լավ ուսումնասիրած լինելով ժողովրդական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները, Իսահակյանը այդ ստեղծագործությունների օրինակով կերտել է մի շարք ուշագրավ ինքնուրույն գործեր, որոնք մոտենում են ժողովրդական երգերին ու վիպերգերին, լեզենդներին ու առակներին, տալիս են վերջիններիս գեղարվեստական պատրանքը: Այսպես.

Ժողովրդական լեզենդի նմանություն ունի Իսահակյանի «Մեր նախահայրերը» (1917 թ.), որի թեման վերցված է հայ ժողովրդի վաղնջական անցյալից: Իր հեռավոր նախնիների կյանքի ու պայքարի հերոսապատումը վերակենդանացնելու նպատակով, բանաստեղծը օգտագործել է հայ և օտար աղբյուրներում (սեպագիր արձանագրություններ, ժողովրդական առասպելներ, պատմական դրվածքներ) եղած համապատասխան նյութերը՝ ստեղծելով ինքնուրույն գեղարվեստական սյուժե:

Իր պատմելաձևով, կառուցվածքով և մանավանդ պատմա-գիցարանական մի շարք մոտիվներով ու անուններով (Ուրարտու, Խալդի, Նայիրի, Սարգուրիս

կավկասի, Մասիս, Վահագն և այլն), «Մեր նախահայրերը» հեռվից-հեռու հիշեցնում է հայոց հնագույն պատմա-առասպելական բանահյուսության նմուշները (Արամի և Հայկի հայտնի ավանդավեպերը)¹:

Ժողովրդական բալլադներն է հիշեցնում Իսահակյանի «Սիրահար Նադոն» (1934 թ.), որի նյութը վերցված է Ալադյազի յայլանների բնակիչ քրդերի կյանքից: Իր գրվածքի միջոցով բանաստեղծը այն միտքն է արժարժում, ըստ որի սիրո զգացումը ավելի բարձր է մարդկային հպարտության զգացումից: Գրվածքի հերոսներն են՝ Նադոն ու Գյուլիզարը, որոնց համար իբրև հովվական կյանքով ապրող լեռնցիների, բնորոշ է և՛ ասպետական ուժեղ սերը և՛ հպարտության զգացումը:

Իր ժանրային առանձնահատկություններով, տաղաչափությամբ ու ոճով «Սիրահար Նադոն» մոտիկից հիշեցնում է հեղինակի մշակած «Աեյլի և Մեջնուն» քրդական ժողովրդական հայտնի լեգենդ-բալլադը:

Ժողովրդական առակի նմանություն ունի Իսահակյանի «Քաղցած հավր» (1932 թ.), որի համար հիմք է ծառայել՝ «Հավր երազում կուտ կը տեսնի» հանրահայտ առածը: Ընդարձակելով և սյուժետային ձև տալով վերջինիս, բանաստեղծը դարձրել է այն երկար ու կարճ տողերով շափածո մի գործ (ոտանավոր), որն իր ոճով ու ալլաբանական բնույթով հիշեցնում է մեր փոքրածավալ ժողովրդական առակները:

Քաղցած հավր երազ տեսավ,
Երազի մեջ-կորեկ անբավ:

¹ Մ. Խոսրեանցի, Պատմութիւն հայոց, գիրք Ա, գլուխներ՝ Ժ—ԺԱ, ԺԳ—ԺԴ:

Եվ կտուցը՝ ողևորված՝
 Զարկեց ուժգին
 Մեծ կորեկին...
 Բայց բերկրանքից զարթնեց հանկարծ,
 Տեսավ՝ փոխան կորեկ հատին,
 Կտուցն, ավա՛ղ,
 Առել է շոր թառի փայտին՝:

Նույն տիպի գործեր են նաև «Արևի մոտ» (1905 թ.) հեքիաթը, «Զինդիզ-խանը» (1907 թ.), «Լի-թայի-Պո» (1926 թ.), «Սոկրատեսը» (1936 թ.) ավանդույթյունները, «Օմար Խայամի վեճը աստծու հետ» (1909 թ.), «Սաադիի վերջին դարունը» (1923 թ.), «Զինական մի հին գրույց» (1935 թ.) զրույցները, «Մի հարցում» (1922 թ.), «Կյանքից թանկ բանը» (1923 թ.), «Թագավորից փախչողը» (1935 թ.) առակները, «Ալադյազի մանիներ» շարքի մի քանի երգերը («Տղայի տաղը», «Աղջիկների երգերը» — 1895—1917 թթ.), «Սև միզարըս...» (1906 թ.) երգը և ուրիշները:

4.

Ժողովրդական բանահյուսության օգտագործման ուրույն մի ձևն էլ Իսահակյանի մոտ՝ բանահյուսական մեջբերումներն են: Իր ինքնուրյուն երկերի հենքի մեջ նույնությամբ կամ թեթև ոճավորումով մտցնելով ժողովրդական բառ ու բանի նմուշները, բանաստեղծը դրանով իսկ ներմուծել է նրանց մեջ ժողովրդական կյանքի ու կենցաղի կոլորիտը, ժողովրդի իմաստության

1 Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 174:

ու հանձարի շունչը, նրա սեպտիստական արվեստի ոճն ու ոգին: Դա առանձնապես ցայտուն է արտահայտված հեղինակի սեպտիստական արձակում, ուր տարբեր շափով ու ձևով բերված են ժողովրդական առած-ասացվածքներ, երգեր, առակներ, գրույցներ ու ավանդույթներ: Այսպես.

«Ուստա Կարոն Բագրանի ուխտին» (1912 թ.) արձակ գրվագում մենք դանում ենք ժողովրդական առած-ասացվածքների և պարերգների օգտագործման մի շարք հաջող նմուշներ («Գլորվող քարը հիմքի քար չի ըլնի», «Հարուստ կազը լավ պար կխաղա», «Կույր հարուստի լույս աչքերը միշտ կգովեն», «Ոսկին դիր իշու վրա, ամեն մարդ էլ գլուխ կուտա», «Ծոծրակս քերեմ, տեղը կբերեմ», «Մկի ծակին էրնեկ պիտի տան»:— «Դե՛հ, սիրուն կաքավ...», «Կլոր պա՛ր, կլոր պա՛ր...», «Նշի ծառին նուշ կըլնի...», «Լաշիմ-նանա, կաշիմ-նանա...»¹:

«Բայրամ Ալին» (1924) թ.) հուզիչ պատմվածքում, ուր վերարտադրված է բեկերի ու աղաների դեմ հողի ու ջրի համար վրեժխնդիր և սիրած կանանց համար արյուն թափած ադրբեջանցի ժողովրդական հերոսների կյանքը, տեղին կերպով մեջ են բերված մի քանի ադրբեջանական առած-ասացվածքներ և մի աշուղական երգ («Բիր տաշ, բիր բաշ» = մի քար, մի գլուխ, «Մարդ մեկ օր ծնվել է, մեկ օր էլ պիտի մեռնի, բանը իգիթի անուն թողնելն է»):— «Սարի ամպը գոռուն-գոռուն կը գոռա...»²:

¹ Ա.Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 296—302:

² Նույն տեղում, էջ 52—55:

«Համբերանքի շիրուխը» (1928 թ.) սեպտեմբերյան սթանչելի պատմվածքում, որտեղ հեղինակը մեծ վարպետությամբ քանդակել է բազմատանջ ու բազմափորձ, ազնիվ ու աշխատասեր, տոկուն ու համբերող, իմաստուն ու փիլիսոփա հայ գյուղացու՝ Օհան ամուհայակապ կերպարը, իբրև վերջինիս խոսքի համեմունքն ու աղը՝ հանդես են գալիս մի շարք ժողովրդական առածներ ու ասացվածքներ («Մարդը կերթա, աշխարքը կը մնա»), «Ձեռքս բան, ոտքս՝ դերեզման», «Կռիվն ու՛րտեղից է: Մեկը կուտե, մեկելը կաշե.— կռիվն էնտեղից է»), «Գեղ պիտի կանգնի, որ դերան կուտի»), «Ազահ մարդու փորը կրնա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անութի կըլնի»), «Կծծի մարդու վիզը ոջիլը կուտե, փողը՝ ուրիշը»), «Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական»)¹:

¹ Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 34:



Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Կոմիտասի ծննդյան 80-ամյակի առթիվ 1949 թ. գրված իր հուշ-հոդվածի մեջ, խոսելով հանճարեղ արվեստագետի ստեղծագործության էության ու նշանակության մասին, Իսահակյանը ընդգծում է այն հանգամանքը, որ Կոմիտասը բյուրեղացրել ու բարձրացրել է հայ շինականի աշխատանքի, բնության, սիրո, ուրախության և տխրության երգերը և որպես ազգային մեծարժեք գանձ դրել է դրանք մեր ժողովրդի հոյակապ գանձերի՝ ճարտարապետության և Սասունի էպոսի կողքին: Նա իրավացիորեն հավաստում է Կոմիտասի համազգային մեծություն լինելը, որի երգով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար է զգացել իրեն, ավելի է կապվել իրար հետ և ինքնաճանաչել¹:

Կոմիտասի պես Իսահակյանը ևս համազգային մեծություն է: Նա հայ ժողովրդի ամենամասսայական բանաստեղծներից մեկն է, նրա վերքերի տաղանդավոր երգիչը, լայն հասարակայնությունից ըստ արժանվույն մեծարված սիրելի վարպետը:

¹ Ս. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 34:

Իսահակյանի սրտագին ու հուզաթաթալ երգերը մտել են ժողովրդի մեջ, կարդացվել, անգիր արվել ու եղանակավորվել են նրա կողմից և բանավոր ավանդությամբ անցել բերանից բերան:

Մեծ է Իսահակյանի ժողովրդական բանահյուսության հետ կապված ստեղծագործությունների թե՛ հասարակական և թե՛ դեղարվեստական արժեքը:

Իր երգերում ու վիպերգներում, լեզուներում ու բալլադներում, առակների ու դրույցների մեջ, Իսահակյանը գովերգել է սիրելի հայրենիքի բնությունը, նրա ստեղծագործ ու տոկուն ժողովրդին, պատկերել է վերջինիս ներքին կյանքը, աշխատանքն ու կենցաղը, սերն ու ստելությունը, իրավազուրկ ու տառապալից վիճակն անցյալում, նրա մղած ազատագրական պայքարը տեղական ու օտար կեղեքիչների դեմ:

Բանաստեղծը իր բողոքի ու ցասման ղայրագին ձայնն է բարձրացրել սեփականատիրական «զուլում» ու «քար» աշխարհի դեմ, նշավակել է ցարի ու սուլթանի բռնապետական անարդ իշխանությունները, արտահայտել իր սերն ու համակրանքը հարևան ժողովուրդների և առհասարակ «տառապող մարդկության» նկատմամբ:

Շնորհիվ ժողովրդական ստեղծագործության հետ ունեցած սերտ կապի, Ավ. Իսահակյանի բանաստեղծական արվեստը աչքի է ընկնում իր անմիջականությամբ ու անկեղծությամբ, իր հուզականությամբ, վառ ու գունագեղ պատկերներով, կենդանի ու արտահայտիչ լեզվով:

Ժողովրդական ստեղծագործության աղունքների հետ կապված՝ իր լավագույն բանաստեղծություններով

(«Է՛յ ջան հայրենիք», «Ա՛խ մեր սիրտը...»), «Սիրեցի յարս տարան», «Մաճկալ ես, բեղարած ես», «Որսկան աղբեր», «Բինգյուլ» և այլն), լեզենդ-բալլադներով («Հայրենի հողը», «Ժողովրդի քնարը», «Արաքսի ծնունդը», «Մոր սիրտը», «Հավերժական սերը» և այլն), վիպերգներով («Սասմա Մհեր» և այլն) Իսահակյանը հաստատուն տեղ է նվաճել հայ նոր գրականության խոշորագույն կլասիկների շարքում:

Բանաստեղծի այդ ստեղծագործությունները հայ գրականության անկորնշելի գոհարներից են: Դրանք կապրեն այնքան ժամանակ, որքան կապրի ինքը հայ ժողովուրդը և որքան ժամանակ կանգուն կմնա՝

Ալագյազը՝ աստղերի մեջ՝
Ադամանդե թագը գլխին...:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	էջ
1. Նախարան	5
2. Ժողովրդական ստեղծագործությունների դրական մշակումներ	13
3. Ժողովրդական բանահյուսության արտահայտչական միջոցների ստեղծագործական օգտագործում	76
4. Վերջարան	101



Արամ Տիգրանի Ղանալանյան

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ


Պատ. խմբագիր Խ. Ս. Սարգսյան
Հրատ. խմբագիր Էմ. Ա. Պիվազյան

Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան Սրբագրիչ Ժ. Մ. Ադոնց

ՎՖ 12964 Պատվեր 302 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 22/VIII 1955 թ., ստորագրված է տպագրության 3/X 1955 թ., տպ. 6¹/₂ մամուլ+6 ներդիր, հրատ. 4 մամ., թուղթ 84×108¹/₃₂: Գինը 1 ո., 70 կ., կազմը 2 ո.:

ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124:



(3747)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031749

A II
31749